



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Handwritten text at the top of the page, possibly in a non-Latin script.

16291

Handwritten text in the middle of the page.

Handwritten text at the bottom of the page.

1863

891.99
7-89

E 20 03

- 9

ԱՂԱՍԻ

ԱՋԳԱՅԻՆ ՈՂԲԵՂՊՈՒԹԻՒՆ

-----:ՅԵԸ:-----


(Վերջ Հայաստանից ստանձ)

-----:ՃԵԸ:-----

ՅՕՐԻՆԵԱՅ

ՊԵՐՃ ԱՏԵՓԱՆՆԱՅԵԱՆ ՊՈՑԵՆԵՆՅ

ԱՇԵՆԴԱԿԵՑԻ



1863-ՈՅԺԲ

ՏՓԻՍ

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

ՊԱՐՐԵՆԻ ՄԱՐԿԻՄԵՆՆԵ ՆԻ ՀԱՄԱՐՁՈՒՄԻՍ ԱՆՅՈՑՅԵԱՆՅ

3587

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

№ 12

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈՒԲՅԱՆ - ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ.

ԹԻՖԼԻՍ

46 թույլ թիվ: 213

891.99

7-89

400



ԱՂԱՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԱԲԵՐԳՈՒԹԻՒՆ

212

ԳԵՐԱՅԱՐԳՈՅ ՏԵՍՈՒՆ

ՌՈՄԱՆՈՍԻ ՊՕՂՈՍԵԱՆ

ՆԱԴԻՐԵԱՆՑ

ՆՈՒԷՐ

ՅԵՐԱԿՏԱԳԷՏ ՄՐՏԵ

Ազգասէր Տէր,

ԱՅՍ տարի Թիֆլիզումը մեր ներկայացրած մի քանի հայկական թատրոնների սիրալիր ընդունելու թիւնը և մեր ազգի թատրոնի վերայ ցոյց տուած մեծ եռանդը քաջալերեց ինձ ձեռնամուկ լինիլ մի ազգային թատրոն զրեղու: Մտքումս զրի իմ հայրենակցաց արդի կեանքից վեր առնել գրուած իս նիւթը: Բացուեցան աչքիս բազմաթիւ տեսարաններ Արարատեան գաւառի ընտանեկան կեանքից, Հայաստանի շատ կըտ-

88792
2001

րիճներ ներկայացան առաջիս իրենց նահապետական պար-
զութեամբ և քաջագործութեամբը, բայց ես թողլով այդ
ամէնը, ընտրեցի ինձ համար այժմեան դրականութեան մէջ
✓ ինձ լեզու առող և յառաջ քաշող Արթուրայեանիս դիւցազնը:
Հայրենակցացս վարքն ու բարքը և Արարատեան գաւառի ներ-
կայ դարուս աղէտքները մեր աչքի առաջ վիպասանօրէն ներ-
կայացնող Խաչատուր Աբովեանը, որ առաջին անգամը խրա-
խուսեց ինձ ազգային աւանդութիւնները երդելու, այսօր և
նա պարգևեց ինձ իր Ազասին թատրոնական բեմի վերայ
դուրս բերելու:

Ողբերգութեանս մէջ իմ հայրենակցաց կենաց նկարագիրը
պարզ ցոյց տալու համար, ես աշխատել եմ 'ի գործ դնել և
Աբովեանի քաղցր դարձուածքները, չհեռանալով որքան կա-
րելի է և թատրոնական բեմին յարմար լեզուից: Աամեցել եմ
իրրև մի փունջ ծաղիկ Հայոց ամէն գաւառական բարբառ-
ների միջեց շնորհել և Արարատեան գաւառի ընտիր ընտիր
ոճերն ու յատկութիւնները և սրանով թէ քաղցրութիւն և
ճաշակ տալ գրուածքիս և թէ դարձնել Աբովեանի «ԱԼԻՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ» վերայ ամէն Հայի ու շարքութիւնը:

Եթէ հասայ իմ նպատակիս կամ ոչ, ես չեմ կարող վըճ-
ուել այլ այս միայն կասեմ, որ իմ ցանկութիւնս 'ի գլուխ
տարայ. եթէ իմ գրած «Ա. Ա. Ս. Ս.» Ողբերգութիւնը չյաջո-
ղեցաւ ըստ ցանկութեանս, այս գոնէ արի, որ թատրոնական
խաղարկութեանց մէջ աւելի կրթեալ և յարմար մարդիկ կամ
քննութեան տակ ձգելով իմ գրուածքս և կամ նորը, շարա-
դրելով այս նիւթիս վերայ, կրկին և կրկին կրկնադանայնեն
հայրենակցս վարքն ու բարքը և Աբովեանի անմահ անուներ,
այս է միայն իմ սրտիս փափաքելին:

Իսկ իմ այսքան եռանդեամբ աշխատութիւնը ո՞ւմ կա-
րող եմ նու իրել, Ազգասէր Տէր, եթէ ոչ նրանց միայն, որք ու-
րիշներեց շատ գերազանց լինելով հայրենասիրական հոգևով
և զգացմամբ, գիտեն գին դնել այսպիսի ազգային յիշատակնե-
րի: Ես շատերի միջեց Ձեզ ճանաչեցի այդ վեհ հոգի անձը և
փառք համարեցի ինձ 'ինչան իմ անմտաց երախտազխտու-
թեան պսակել իմ «Ազասի» ճակատը Ձեր ազգասէր անուամբը:

Յոյս մեծ ունիմ, թէ ներողամիտ լինելով իմ թերու-
թեանցը, քաղցր ակնարկութեամբ կը բարեհաճիք ընդունել
սրախցս բղխած այս փոքրիկ նուէրքը. այս միայն կը համարիմ
ինձ փառք ու պարծանք և կը քաջալերուիմ այսուհետև չը
դադարիլ սոյնանման աշխատութիւններից :

Ազգասիրութեան Ձերոյ

Նուաստ ծառայ

Պերճ Ստեփաննոսեան Պոօչիանց

Աշտարակեցի :



Ա Ղ Ա Ս Ի

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ի Ն Ք

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ ԱԲՈՎԻՆՔ

ՄԱՐԳԱՐԻՏ, նորա կինը.

ԱՂԱՍԻ, սոցա որդին.

ՆԱԶԼՈՒ, Աղասու կինը,

ՄՈՒՍԱ,

ԿԱՐՕ

ՎԱԹՕ

ՎԱՆԻ

Աղասու ընկերակիցքը.

ՄԱՐԻԱՄ, քանաքեռցի մի այրի կին.

ԹԱԳՈՒՀԻ, Մարիամի աղջիկը.

ԱԻԵՏԻՔ, Աղասու հօր եղբայրը.

ՅԱՐՈՒԹԻՒՆ, Մուսայի հայրը.

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ, Հայ իշխան Երեւանի.

ՍՄԲԱՏՈՎ, իշխանազն աստիճանաւոր.

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

ՄԻ ԲԱՆՏԱՊԵՏ.

ԱՌԱՔԵԼ, մի քրդստանցի ծեր Հայ.

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ, ՅԱՐՐԱՇՔ ԵՆ ԶԻՆՈՒՈՐՔ ՊԱՐՍԻՑ,

ՔՐԴԵՐ, ԶԻՆՈՒՈՐՔ ՌՈՒՍԱՑ ԵՆ ԱՅԸՆ :

Ա. արարուածը կատարուում է քանաքեռ գիւղի մէջ, Բ-ը Արայի սարումը, Գ-ը Ա.նի քաղաքի մէջ, Դ-ը Փամբակու Խղարաքիլիսի սարումը, իսկ Ե և Զ Երեւանու բերդումը :

Անցքը պատահում է 1822-ից—1827 թիւը :

Տեսարանը ներկայացնում է քանաքեռ գիւղումը մի հասարակ տան բակ կիսաւեր պատերով, հեռուումը երեւում է տերեւաթափ այգիներ եւ ամպերի ու մշուշների մէջ կորած լեռներ, երկինքը ամպած, ձիւնը ամէն տեղ բռնած : Թագուհին բակումը կանգնած է :

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԱՐԻԱՄ ներս գալով.

Թագուհի, ուրիշների համար էս օր բարեկենդան է, հիմա ամէն տեղ ուրախութիւն է, ասում են, թէ մեր տէրտէրն ու իշխաններն էլ տանուտէր Օհանէսի տանն են հաւարուած՝ ուրախութիւն անում՝ իսկ մեզ համար միայն սուգ է և տրամութիւն : Հինգ տարի յառաջ՝ քանի քո հայրդ կենդանի էր, մենք էլ ուրախութիւն էինք անում, քո հայրդ էլ էն իշխանաց հետ իմիասին էր, բայց հիմա մեր երեսին նայող չկայ, մեր դուռը ամիսներով ոչ ոք չէ բանում :

ԹԱԳՈՒՀԻ.

Փռք Աստուծոյ, մայր, ի՞նչ պէտք է անենք. բայց այսօր երբ ես մեր հարեան Սանդղտի հետ ջրից դալիս էի, ի՞նչպէս տեսայ մեր զիւղի բոլոր երիտասարդներին. նստած ձիանոց վերայ, տանուտէրի տղայ Աղասին էլ առաջներին, գտակները ծուռը դրած՝ ձիարշաւ էին գնում դաշտը. աչք պէտք էր, մայր, որ նայէր, թէ ի՞նչպէս Աբովինց կարիճ Աղասին խաղացնում էր իր նժոյգ ձին :

ՄԱՐԻԱՄ.

Ո՞վ կարէ պատմել այն քաջութիւնը և վեհանձնութիւնը, որ ունի Աբովինց Աղասին, միայն ձիարշաւն է, նա ամէն բանում քաջ է, նրան ոչ ոք չի հաւասարիլ. Սարգսրի բոլոր

Ֆարրաշները նրանից դողում են, ինքը Սարգարն ևս շատ պատուում է նրան. տեսնում ես, երեսուն տարեկան տղայ է, բոլոր Հայ սարվազների վերայ նայիր է կարդուած և մինչև հիմի ո՞վ գիտէ, ո՞րքան Օսմանցուի և Քրդի զուլս է կտրել :

ԹԱԳՈՒՀԻ .

Ես կարծեմ բնութիւնն էլ շատ ազնիւ պէտք է լինի, բոոր երիտասարդները նրան սիրում են, նրա անունովն երդուում են, մէկ խօսքով մեր զիւղումը նրա նման լաւ տղայ չկայ :

ՄԱՐԻԱՄ .

Բնութիւնն էլ հարցնելու չէ, ո՞չ թէ միայն երիտասարդները, ծեր մարդիկն անգամ նրան կեանք և արեւշատութիւն են խնդրում. այս հասակումը նա դեռ մէկի սիրտը չէ վերաւորել. ասում են դրա պապ Աբովն էլ շատ պատուական մարդ է եղել, սա էլ, երևում է, նրան է նմանել, ասած է, Վարդ իր ազգը չի կորցնել, մի առուով որ մի ժամանակ ջուր է վնացել էլի կերթայ. սա իր ձեռքովն է մշակում իրենց մեծ այգին, այն պատճառաւ, որ աղքատաց բաժինն է, ամբողջ ամառն էն տեղ է լինում և ամէն պտուղը իր ձեռքովն է աղքատաց բաժանում. էս կանոնը հաստատել է դրա պապ լուսահոգի Աբովը :

ԹԱԳՈՒՀԻ .


Իր քաջութիւնի և բարեսրտութիւնի հետ էլ Աստուած ամէն շնորհքը պարգեւել է դրան. մեր Քանաքեռի աղջկունքը երբ 'ի միասին ժողովում ենք, թէ և դա ամուսնացած է և որդիք ունի, բայց էլի դորա վերայ ենք խօսում. ամէնքը երանի են տալի դրա մօրը և կնոջը, ամէնքը ասում են, ախոս, որ դու մէկ ես ծնած. քո մայրը քեզ նման տասը պէտք է ունենար. և ճշմարիտ որ, մայր, Նազուկն՝ դորա կինը երջանիկ է բոլոր Քանաքեռի կանանցիցը :

ՄԱՐԻԱՄ .


Ա՛խ, քո խղճալի հօր աչքը միշտ այդ քաջ երիտասարդի վերայ էր. եթէ նա կենդանի լինէր, գու կը լինէիր Աղասու ա-

մուսինը, բայց ի՞նչ, հօրդ յանկարծաստան մահը զըկեց քեզ
և ուրիշը արժանացաւ այդ փառքին. ճշմարիտ է, Աղասու ա-
մուսին Նազըւն ևս պակաս աղջիկ չէ, բայց ի՞նչ, քո հայրդ
. . . էս ի՞նչ աղաղակ է մեր դռանը :

Դրսիցը լսուում է ձիանոնց ոտից տրոփիւն :



ՏԵՍԱՐԱՆ Բ.



ՀԻԻՍԷԻՆ, ԱԼԻ և ՎԵՅ ԶԻՆՈՒՈՐՔ տուն են մասնում.

ՄԱՐԻԱՄ յետ փախչելով.

Վայ ինձ, էս ի՞նչ եմ տեսնում. . . .

ԹԱԳՈՒՀԻ, մօրը հետեւելով.

Ո՛վ Աստուած, ո՛վ մայր, էս ո՞վ են սրանք և ի՞նչ են ուզում :

ՀԻԻՍԷԻՆ.

Ո՞ւր էք փախչում, ձեզ ոչ ոք չէ վնաս տալի, Սարգարի
հրամանն է, թագուհի՛, քո դովու թիւնն իրեն է հասել և դու
արժանացել ես նորա շնորհքը վայելելու, մենք եկել ենք քեզ
տանելու, զրանից աւելի ի՞նչ մեծ փառք ես կամենում :

ԹԱԳՈՒՀԻ թուլանալով և գետն ընկնելով.

Վայ իմ սե օրին մայր իմ

ՄԱՐԻԱՄ դուրս փախչելով և ներս վազելով.

Օգնե՛յէ՛ք, քրիստոնեայք, հասէ՛ք, տունս կոխեցին, տարան,
ո՞ր Զուրն ընկնիմ Աստուած, երեսխա տարան, (ընկնելով թագուհու
վերայ) թագուհի՛, յառաջ թող ինձ սպանեն, ապա ուր կա-
մին, քեզ տանեն

ՀԻԻՍԷԻՆ աշխատելով հեռացնել մօրը.

Զոյնդ կարիք, անպիտան կի՛ն, էս բոպէիս քեզ կըսպա-
նեմ, Սարգարի հրամանն է, պէտքէ քո աղջկանը տանինք, ի՞նչ
խօսք ունիս, նրա հրամանին լեռներն են հնազանդում, դու
ի՞նչպէս կը յանդգնիս դէմ կանգնել :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Այս աղաղակի վերայ դրացիք լսելով՝ չփոթուած՝ տուն են լցուում, ոմանք օխրթնած կրկին փախչում են, ոմանք տեսնելով Սարգարի Փարրաշներին, պատերի տակին կուչ են գալի, մի քանիսը աչքնուր սրբում են, այլք մօտ են գալի ազատելու, բայց էլի փախչելով հեռանում են.

ՀԻՒՍԷԻՆ գոռալով ժողովրդի վերայ.

Պուրս կորէ՛ք անիրաւնէր, ի՞նչ էք ժողովել, ո՞վ կը համարձակի մօտ գալ, բոլորիդ սուրբ կը քաշեմ, Սարգարի անդառնալի վճիռն է, ո՞վ իրաւունք ունի ընդդիմանալ: (զինւորներին) Տղայք, դուրս ձգեցէ՛ք զրանց, մի քանի անարգ Հայեր կամենում են մեր առաջն առնուլ, մի՛ վախիք, խփեցէ՛ք, կոտորեցէ՛ք, ես եմ պատասխանատու:

Թուրքերն սկսում են սրան, նրան հրել հրացանի գլխով, այլոց մտրակով են դուրս ձգում, երեխայք սկսում են ճչալ, ուրիշները հառաչում են, բայց կրկին միւս դռնիցը ներս են լցուում:

Ա. Ի.

Հիւսէի՛ն, էլ ի՞նչ ենք երկարացնում, ժողովրդին նայիլ չի լինիլ, մօրը խղճալու ժամանակ չէ, հեռացնենք այս անպիտան կնոջը, առնենք աղջկանն ու գնանք, Սարգարը հիւ՛ս պատում է:

ՀԻՒՍԷԻՆ մօտենալով Մարիամին, որ Թագուս վերայ ընկած ողբում էր.

Վեր կաց, ո՞վ խեղճ կին, քո աղջկանը պատուի ենք տանում և ո՛չ պատժի, աշխարհքը կը ցանկանայ Հիւսէին Սարգարի աչքին հաճոյանալ, Իրան Թուրանի խաները նորա ոտքը համբուրելով՝ կը ցանկան իրենց աղջկանց բաղդաւորութիւնը. զորա համար է ասած «անխելք Հայ». վաղը կը գանք քեզ էլ կը տանինք, լաւ պարզեւների արժանի կը լինիս, Հիւսէին Սարգարին զոքանչ կը կոչուիս, մեր սուրբ օրէնքը կը պաշտես, Մուհամեա փեղամբարի մօտ կերթաս:

ՄԱՐԻԱՄ Հիւսէինի ոտքերն էնկելով.

Ի սէր Աստուծոյ, ձեզ լինի՛ և ձեր պարգևը և ձեր հա-

ւատր, թողէ՛ք ինձ էս տեղ մեռանիլ, խփեցէ՛ք ձեր սուրը իմ սրտումս, ես ձեզ աղջիկ չեմ տալ : (ողեորուելով) Գուրս կորէ՛ք իմ տանիցը, (տեղից վեր թռչելով եւ Հիւսիսին հրելով) կորի՛ր, ես քեզ աղջիկ չեմ տալ : (ժողովրդին) Մարդիկ, ի՞նչ էք կանգնել, ի՞նչ, մինչև երբ պէտք է էս անիրաւ Պարսից ձեռքին գերի լինինք, մէկ օր ծնել ենք, մէկ օր էլ պէտք է մեռնինք, լաւ չէ՞, որ օր յառաջ նահատակուինք և մեր սրբոց մօտ գնանք :

Ասում եւ հրում է կամ այս թուրքին կամ միւսին .

Ա.Լ.Ի.

Շիւսէին, չե՞ս տեսնում էս կինը ի՞նչ է անում, քաղցրութեամբ ոչինչ չի լինիլ, խփենք սրան, վեր ձգենք և էնպէս քարշենք, տանինք :

ՄԱՐԻԱՄ.

Թագուհի՛, աչքիս լիցս, մի՛ թուլանար, մի՛ վախիր, ես կը մեռնիմ ու քեզ օտարի ձեռք չեմ տալ, էս թուրքերն ո՞վ են, որ քեզ ինձանից հանեն, աչքիս լոյսի նման մեծացրի, որ էգ տէրն ընկնիս դու, վեր կաց, իմ Թագուհի՛, վեր կաց :

ԹԱԳՈՒՀԻՆ ուչքի դալով եւ կրկին նուազելով.

Մայր . . . էս ո՞ւր ենք . . .

ՀԻԻՍԷԻՆ.

Ո՛հ, ի՞նչքան դժուար է եղել մայր և որդի իրարից բաժանելը, Աստուած ազատէ, անբան անասունն ևս իր ձագը կորցնելուս կհանքը հետը տալիս է, թող թէ բանական մարդս : Հեռու կենանք, Ալի՛, թող մի փոքր սիրտը հովանայ էս խեղճ կնոջ, ապա տաննք, ապա թէ ոչ այսպէս բռնի քարշեն էլ անօգուտ է, մեր մեծափառ Սարդարն աւելի կը նեղանայ, եթէ սրանց նեղացնենք :

Ա.Լ.Ի.

Լա. պէտք չէ դրանց խնայել բայց որ հրամայում ես, ի՞նչ պէտք է առնել. (միւս թուրքերին) ալայք, մի փոքր հեռու չացէ՛ք, տեսնենք վերջն ի՞նչ պէտք է ծնանի :

Մ Ա Ր Ի Ա Մ

Թագուհի, աչքերդ բաց, եթէ ամաչում ես, տեսմ, որ այս բողմու թիւնը հեռանայ . . . մարդիկ, ինչէք կանգնելը հեռացէ՛ք . . . Թագուհի, ինչքն ես քո մօրը անփարատ վշտի մէջ ձգում՝ ուզում ես քեզ հետ ես էլ թուլանամ, վեր ընկնիմ, որ երկուտիս 'ի միասին տանին : Ա՛խ կոյր բաղդ, մի տղջիկ ունէի աչքիս լոյսը, նրան էլ ես ուզում ձեռքիցս առնել . Թագուհի, Թագուհի . . . Ձեր ոտքերը կոտրուէր, թուրքեր, մեր երկիրը ոտք չը կոխէիք :

Ասում է եւ թուլացած աղջկայ վերայ ընկնում,

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ .

Ո՛վ Աստուած, ս՛վ աղէտայի տեսարան :

Ա.Ի .

Հիւսէին, հիմա ժամանակ է, մօտ արի՛ վերցնենք, սրանց բաժանելն անհնարին է, այս տեսարանը վերջ չունի, արի՛ երկուտիս 'ի միասին տանինք Սարգարի մօտ, ինչպէս կը հրամայէ, իրեն կամքն է, ամբողջ երեւանը հիմա մեզ է սպասում :

ՀԻԻՍԷԻՆ .

Եսա բարի, տանինք, տղայք, մի երկուտդ դնացէ՛ք ձիանքը պատրաստելու, միւսներդ մօտ եկէ՛ք վերցնենք սրանց . Այլ՛, դու մօրը բռնիք, Մահմուտ, օգնիր դրան, Վալի, ինձ մօտ արի՛, էս աղջկանը վերցնենք, Նազի, գնա՛, իմ ձին մօտ բեր, սրան վրէն ձգենք . դէ՛, շտապեցէ՛ք, քանի ուշքի չին եկել, ձեռքերը կապեցէ՛ք, մի՛ գուցէ ճանապարհին ուշքի գան եւ մեզ կրկին նեղացնեն, էս կինը ուրիշ կին է երեւում :

Թուրքերը մօտ են գալի, որը պարան է բերում, նուազածնեի ձեռքերը կապում, որն էլ իրաբից բաժանելու է աշխատում, զրսիցը լքուում է ձիանց տրոփիւն, թուրքերը կարծում են, թէ իրենց ձիանքն են :

ՀԻԻՍԷԻՆ ղեպի զուրս .

Պահեցէ՛ք էդ տեղ, մենք գալիս ենք :

Գողգոցը շատանում է եւ ներս են մանում զրահաւորուած :

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Ա.Գ.ԱՍԻ, ՄՈՒՍԱ, ԿՍՏՕ, Վ.ԱՔՕ, Վ.ԱՆԻ և ուրիշ միջառնի և-
բխասասարգներ

Ա.Գ.ԱՍԻ.

Դժոխքի որդիք, ձեզ ով է ուղարկել այս անդ, ում վերայ էք թուրներդ սրել, դուրս պրծելը ում վերայ էք այդպէս կատարել, դիցուք թէ, Հայերը ձայն չեն հանում մի՞թէ նրանց ողջ ողջ պէտք է ուտէք, աչքերիդ լոյսը կը թռչեմք էս բոպէիս, մի այրի կի՞ն էք գտել, ոյժներդ նորա՞ն է պատում, դուք ի՞նչպէս համարձակվեցաք Քանաքեռ մտնել, չէ՞ք խմանում, որ Աղասին ձեր հողին կը հանի. կարծե՞լ էք թէ բարեկենդան է, բոլորն ուրախութեան մէջ կը լինին, բարեկենդանն իւր կարգին կը գնայ, միւսները իւրեանց կարգին. կամ թէ Հայի սրբառումն ուրախութիւն թողել էք, որ բարեկենդան առնեն : Կորէ՞ք այս անդից, ապա թէ ո՛չ, Աղասին ցոյց կը տայ ձեզ իւր զօրութիւնը, ՚ի զուր անդը մի՛ կանգնիք, այս անդից ոչինչ չէ՞ք կարող դուրս տանել :

Թուրքերը Աղասու ձայնը լսելով, հեռու են քարչուում, Աղասին մտանում է Թագուհու ձեռքերն արձակում :

ՀԻՒՍԷԻՆ.

Մեզ վերայ ինչո՞ւ ես բարկանում, մի՞թէ չդիտես, որ Սարգարի հրամանն է, դու ևս նայի՛ր ես, ինչ հրամայէ, պէտք է կատարես. մեզ ուղարկել են, մենք էլ եկել ենք, եթէ կամենաս, կերթանք, բայց Սարգարին կը պատմենք ամէն բանը :

Ա.Գ.ԱՍԻ.

Գնացէ՛ք, հեռացէ՛ք, ո՛չ Սարգարը և ոչ ինքը ձեր թագաւորը կարող է ինձ վնասել, բաւական չէ՞, որքան մեր ազգի արիւնը ծծեցիք, դուրս կորէ՛ք, թող ձեր անմաքուր երեսը չը տեսնի այս անմեղ աղջիկը :

ՀԻՒՍԷԻՆ կողմն.

Աւէ, ի՞նչ ենք մնացել, Աղասու ոյժը մենք նոր չպէտք է

փորձենք, սա մի կուպիտ շայ է, սորա վճիռը՝ վճիռ է, դու քաջ
 գիտես, որ սրան հարիւր մարդը հաղիւ կը յաղթէ. ութն
 հոգեով սրան ի՞նչ կարող ենք առնել, և այն այսքան տղայոց
 հետ. արի՛ գլուխներս ազատենք, տանապատիկ աւելացնելով
 Սարգարին պատմէք անցքը, նա շուտով հազարաւոր զօրք
 կուղարկէ և քանաքեռը կաւերէ, աղջկանն էլ կը տանի, դրան
 էլ կսպանէ և մենք կազատուինք այդ հրէշիցը :

Թուրքերը իրար նշանացի առնելով, դուրս են փախչում

ԱՂԱՍԻ ԳԼՈՒԽԸ ԲԱՐՃՐԱԳՆՆԵԼՈՎ.

Թո՛ղ այժմ՝ դնան պատմեն Սարգարին ինչ և կամին :
 (Թաղուհուն) Արի, Թաղուհի՛, բայց աչքերդ, Աղասին կենդանի
 չպէտք է լինէր, նրա ոսկերքը փոած պէտք է լինէին, որ քո
 մաղին անգամ յանդգնէին մերձենալ. վայ ինձ, ի՞նչպէս ան-
 շնչացել է. Թաղուհի՛, զարթնիր, քո խղճալի մօրը մխիթարէ.
 ո՛վ Արարիչ, ի՞նչպէս մօտենամ սրան. օտարի աղջիկ, գուցէ
 ուշքի գայ և մի օտար ոք անսնելով՝ աւելի վաանդուի :

ՄՈՒՍԱ.

Աղասի՛, դիտե՛ս որ մեր կեանքը վտանգի մէջ է, ինչե՛ չը
 խնայեցիր՝ դոնէ քո զառամեալ ծնողացը, բոլոր քանաքեռը
 այսօր գերի պէտք է գնայ. ո՛վ Տէր, այս ի՞նչ պատուհաս էր
 մեր զլխին եկաւ, օգնիր մեզ ո՛վ անմահ Արարիչ :

ԿԱՐՕ.

Վայ մեզ, Աղասի, գու այս ի՞նչ գործեցիր. Վաթ՛օ, կանգ-
 նելու ժամանակ չէ, ի՞նչ ես աիշած մնացել, շտապիր, հա-
 սիր սոցա տունը, մեր իշխանացը յայտնիր, ուրախութեան
 ժամանակ չէ, աստ՛ Աբսվինց Օհանէսին, քո ճրագը հանգաւ :

ՄՈՒՍԱ.

Գնա՛ Վաթ՛օ, գնա՛, շուտ յետ դարձիր, մենք շատ գործ
 ունինք կատարելու : (Վաթ՛օն գնում է.)

ՎԱՆԻ.

Մուսա՛, ո՛ւմ ենք սպասում, վերջներք սրան, ազատուենք, հի-

մա կը գան, մեզ բողբոխ բերդը կը տանին : Ա՛խ Աստուած, Աստուած. էս ի՞նչ օրի հասանք մենք :

Մ ՈՒ Ս Ս .

Աղասի՛, քանի ոտքը խողաղ է, ձի հեծնի՛նք, փախչի՛նք, գնանք ֆամբակ կամ Թիֆլիզ, եթէ քեզ չես խնայում, քո ծնողացը խղճա՛, քո Նազուլին ողորմի՛ր, մեզ խնայի՛ր, որ այս հանդիսին ընկեր ենք եղել. արի՛ գնանք, շուտով Սարգարի զինուորքը կը հասնին, ինչի՞ ես սպասում, նժոյգ ձին տակից զէնքը վըէզ, մի փոքր հաց ո՛ւր լինի, որ չճարենք :

Ա Ղ Ա Ս Ի .

Քարասիրտք, ի՞նչ էք խօսում, մայր և աղջիկ այսպէս անշնչացած թողել էք և մեր գլխի հոգան էք մտածում, ջուր հասցրէ՛ք ՚ի սէր Աստուծոյ, դեռ սոցա ուշաբերենք, ես չեմ վախենում ո՛չ կախաղանից և ո՛չ գնտակից : Կարօ՛, շուտ ջուր բեր :

Կարօն գնում է մի ամանով ջուր է բերում :

Ա Ղ Ա Ս Ի Ջ ուր Ե ց ն ց զ կ ե լ ո վ .

Թագուհի՛, Մարիամ, վեր կացէ՛ք, աչքներդ բացէ՛ք, Թուրքերը կորան, ոչինչ երկիւղ չմնաց :

Մ Ա Ր Ի Ա Մ ու չ ք ի գ ա լ ո վ .

Ո՛վ ազատիչ մեր, իմ խեղճ երեսային դու փրկեցիր :

Ա Ղ Ա Ս Ի .

Քաջացիր, Մարիամ, քո թշնամեացդ հեռքը չմնաց այս տեղ աշխատիր Թագուհուն ու շքի բերել :

Մ Ա Ր Ի Ա Մ Ջ ուր Ե ք ս ե լ ո վ .

Թագուհի՛, իմ աչքի լոյս, աչքդ բաց, մեր թշնամիքը կորան, Աստուած մեզ ազատեց Աղասու ձեռքով :

Թ Ա Գ Ո Ւ Հ Ի ու չ ք ի գ ա լ ո վ .

Մայր, էս ո՛ւր ենք, վայ իմ գլխին, ո՞վ է այս օտար աղէն, ամօթ չէ՞ ինձ ուրիշի մօտ էսպէս երեսս բաց :

Ձեռքով ծածկում է երեսը .

ԱՂԱՍԻ.

Վեր կայ, Թագուհի, քոյր իմ, ազատ ես թշնամիներից, Աղասին կենդանի չպէտք է լինէր, որ քեզ տանէին, քանի կեանք ունիմ, չեմ թողուլ ոչ ոքի քեզ մերձենալու :

ՄՈՒՍԱ.

Աղասի, խղճած մեզ, շտապի՛ր գնանք, ահա ստնաձայն է լսուում, մի՞ գուցէ անօրէն Փարրաշները շուտափոյթ լուրը հասցրած լինին Սարգարին և նորա գօրքը լինի գալիս : (Գնալով դէպի տեսարանի խորքը եւ դուրս նայելով.) Բայց ո՛չ վայ ինձ, ահա քո տարաբաղդ հայրը, ահա՛ մեր բոլոր իշխանները գալիս են. ո՛վ Աստուած, էս ի՞նչ ցաւ է որ մեզ վերայ եկաւ :


Դրոյցը հառաչանքներ է լսուում :

ԱՂԱՍԻ.

Հայրս ա՛խ



ՏԵՍԱՐԱՆ Ե.



ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ, ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԱԻԵՏԻՔ, ՎԱԹՕ

ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ԻՇԽԱՆՔ.

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ.

Աղասի, . . . սուր խփի՛ր ինձ, վայ իմ օրիս, տուես քանդուեցաւ, իմ երկի՛նք, իմ գեաթի՛նք, իմ հրեշտակ Աղասի, թո՛ղ քո ձեռքն ինձ սպանի, որդի՛, քանի աչքու՛մս լոյս կայ, քանի բերանիս շունչ, ոտքդ զի՛ր բերանիս, թող ես մեռանիմ, յետոյ քո կամքն է. . . Ա՛խ, էս ի՞նչ ես արել, որդի՛, դու Սարգարի Փարրաշներին անպատուութեամբ փախցրել ես, Սարգարի հրամանը ոտնատակ ես տուել, դու կամեցել ես քո պապերի վրէժը նրանցից առնել, լու ես արել իմ բարերար, հերիք էր, որքան սրանք մեզ չարչարեցին. ո՛վ երկնային թագաւ որ, մինչև երբ մեր մեղաց պատժիցը չըպէտք է կարողանանք ազատուիլ :

մինչև երբ չպէտք է գթաս այս հողի հետ հաւասարուած
ազգիւն բաւական է մեր մեղքը մեր երեսը հարկանես . . .
Աղասի . . . Աղասի . . . որդի :

ԱՂԱՍԻ հօրը գրկելով .

Բաւական է, հայր, բաւական է մորմօքես իմ սիրտը, ես
դեռ ամոստում եմ, որ չեմ սպանել նրանց. ես հողի եմ ա-
զատել, ես հաւատոյ համար եմ արել, էս խեղճ աղջկայ (ցոյց
տալով Թագուհոյն) հաւատն եմ պահպանել, սա էլ շատերի հետ
սկամայից մահմետական կրօնքին պէտք է երկրպագութիւն
տար. էս օր մեր Վարդանանց զօրավարաց յիշատակն է կա-
տարել մեր սուրբ եկեղեցին, էս օր մեր փրկութեան օրն է,
եւ լաւ զիտեմ, որ էս օր Վարդանանց հետ ես էլ պէտք է նա-
հատակու իմ : Բայց ո՛չ, մինչև որ քսան Պարսկի գլուխ չը կըտ-
րեմ ե. ո՞վ զիտէ Սարգսրին եւ Հասան խանին անգամ սատանի
բաժին չանեմ, չեմ մեռանիլ, չեմ յաղթուիլ. էս օր ես պէտք
է Վարդան դառնամ, Ղուսաւորչու ոտքը հաւատոյ համար
պատերազմ բանամ մահմետական սուտ կրօնքի դէմ. ահա իմ
քաջ ընկերքը, սրանք իմ հետ ակոյեան կը հանդիսանան այս
սուրբ պատերազմի մէջ, իսկ դուք էլ այդ պատուելի իշխան-
ներովը դարձէ՛ք մեզ համար մի մի Ղեռնդներ, մի մի Յովնէփներ :
Ձէ, հայր, չէ, Աղասին իր խօսքին հաստատ է, Աղասին քաջ
Աբովի թռռն է, Աբովի արիւնն ունի երակներումն. դու էլ
հայր, դու էլ չպէտք է հաճիս, եթէ ես կամենամ վատու-
թեամբ մեռանիլ. ես քաջութեան անունը քեզանից եմ սովո-
րել 'ի մանկութենէ. Աբովը թէպէտ մեռած է, բայց նորա թո-
ւը կենդանի է, կենդանի :

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ .

Աղասի, Աղասի, այս ալեւոր հասակս քեզ բարե-
խօս եմ բռնում. ա՛ռ հօրդ վերջին օրհնութիւնը, հեռացի՛ր
էս տնօրէնների երկրիցը, գնա՛ ֆամբակ, Թիֆլիզ, Ղարա, կամ
ուրիշ տէրութեան երկիրներ : Ես քաջ գիտեմ, որ շուտով Սար-
գարի զօրքը կը դայ. քո փախցրած թուրքերը մէկին տասն ես
աւելայնելով, բամբասած կը լինին քեզ Սարգարի մօտ, ուրեմն

գնան որդի թող ինձ սղաննեն, ես յօժարութեամբ կախաղանի վերայ կը բարձրանամ և եթէ գերեզմանիս մէջ ևս քո կենդանութիւնը լսեմ, կը փառաւորուիմ :

ՄՈՒՍԱ.

Աղասի՛, քո ճերունի հայրն է աղաչողը, լսի՛ր դրան, ահա ձիանքը պատրաստ են, փախչինք, ազատուինք, մի՛ վախիր, մահը միայն կը բաժանէ մեզ միմեանցից, մեր կեանքը պատրաստ ենք քեզ համար զոհել ամէն ժամանակ :

ԿԱՐՕ.

Գնանք Աղասի՛, քո ընկերքը յաւիտեան քեզանից չեն հեռանալ, արիւններս կը թափենք՝ միայն քո ազատութեան համար :

ՎԱԹԹ.

Աղասի՛, լսի՛ր մեր խնդիրքը, ստքերդ ընկաճ աղաչումներք,

ՎԱՆԻ.

Աղասի՛, ձիանքը պատրաստ են, դու մեզ խօսք ես տուել, որ զյուսպ մեզ համար յետ դնես ամէն փորձանքում, մեզ էլ քեզ հետ պէտք է սպանէ Սարդարը, եթէ էս տեղ մնանք, մենք վճռանդի մէջ ենք, ինչի՞ մեզ չես կամենում ազատել, մենք եթէ առանց քեզ փախչինք, ի՞նչ կարող ենք առնել, ուր որ լինինք, մեզ կը գաննեն և յետ կը բերեն :

ԱՂԱՍԻ.

Հայր, իմ սիրելի ընկերք, ընչի՞ այդպէս հարկադրում էք ինձ, ես կամենում եմ երևան գնալ, մի Քանի Պարսկացի զլուխ կտրել և էնպէս մեռանիլ, տարաբանող ծնողք, թշուառ իմ Նազու, տարաբանող Հայոց ազգ :

ԱՒՏՏԻՔ փաթաթուելով Աղասուն.

Իմ առիւծ Աղասի՛, մի՞թէ մենք չգիտենք քո սրի զօրութիւնը, մի՞թէ մեզ յոյտնի չէ որքան հսկաների ես յաղթել Սարդարի առջևը, պատերազմի մէջ Հնայելով գնտակներին և կրակներին՝ աներկիւզ վտանգաւոր սեղերն ես յառաջ

խաղացել և Սամանցուի կամ Քրդի մազերից քարշ տալով,
 կենդանույն Սարգարին ներկայացրել, գիտենք, քո այս անպատ-
 մելի քաջութեանց վերայ Սարգարը զարմանալով և ճակատդ
 համբուրելով՝ խանութիւն և մեծ մեծ բէգութիւններ էր
 խոստանում, եթէ իրանց մոլար կրօնքը ընդունէիր, բայց դու
 այն շառաւիղեցը չէիր, որ քո սուրբ հաւատդ աշխարհիս
 ունայն փառքերի հետ փոխէիր. քո անմահ քաջութեանդ
 կենդանի վկայ ահա այդ ոսկեզօծ սուրը, որ ինքը Սարգարն
 է ընծայել, այդ նժոյգ ձին, որ Նաղի-Նանի պարգևն է, այդ
 Հայ սարվազների վերայ նայիրութեան աստիճանը, որ հասա-
 կիդ համեմատ չէ, բայց վեհանձնութեանդ համար դեռ շատ
 փոքր է. գիտենք այս ամէնը, բայց յիշիր, որդեակի, քո սերունդը,
 ես անգաւակի, դու հօր մինուճար, մեր յոյսը դու ես և քո
 երկու մատաղ երեխայքը, լաւ իմացիր, եթէ էս տեղ մնաս,
 պէտք է հանգչի մեր տան ճրագը : Գնա՛ Սղասի, զնա՛, քո հօր-
 եղբայրը քեզ հաստատ խօսք է տալի, ուր և լինիս դայ, քեզ
 գտնի :

36790

ԱՂԱՍԻ.

Ա՛խ, դուք իմ կռները թուլացնում էք, եթէ ես զնամ,
 կարելի է էս աննման աղջկանը կրկին տանին, և ի՛նչ, թուր-
 քերը պէտք է պարծենան, թէ Հայի աղայ Աղասին աւազակի
 նման սպառնալով փախցրեց և կնատ մարդոյ նման գլուխ ա-
 ռաւ հալածուեց, չէ՛, չէ՛, իմ վճիռս հաստատ է :

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԷՍ հատկիւս ձայնիւ.

Աղասի՛, ահա հոգիս տալիս եմ. . . .

Դրոսից լսուում է կանանց լացի ձայն.

Որդի՛, իմ ազնիւ որդի՛ :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՅՆՔԻ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՆԱԶԼՈՒ և մի երկու ուրիշ կանայք.

ԱՂԱՍԻՆ հօրը բռնած և յաւելով դէպի
 դուռը նայելով.

Վ՛այ ինձ, ահա՛ մայրս և Նապլուն :

ՄԱՐԳԱՐԻՏ.

Աղասի՛, իմ ազնիւ որդեակ, էս ի՞նչ կրակ էր, որ քո մօր սիրտը ձգեցիր, (զրկելով) ա՛ռ. իմ հոգիս, հոգւոյս հրեշտակ. . . .

ՆԱԶԼՈՒՆ զուխը կորացրած մօտ դալով.

Աղասի, . . . իմ տէր ու տիրական

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԷՍ.

Խղճա՛ որդի՛, քո պառաւ մօրը, քո անբաղդ Նազուլի, առ մեր վերջին օրհնութիւնն ու բարեւը, հեռացի՛ր, գնա՛, գոնէ թող մխիթարութեամբ գերեզման մտնինք :

ՄԱՐԳԱՐԻՏ.

Աղասի, քեզ գոնէ վրկի՛ր, հերիք է մեզ մեր ցաւերը, թող ես Սարգարի բարկութեանը վրէժ լինիմ, աչքեր, դուրս գաք, չտեսնէք էս վշտերը : Աղասի՛, Աղասի՛, եթէ ուզում ես այս րոպէիս քո մայրը հոգին տայ, մի փոքր էլ ուշացի՛ր. ի՞նչ, դու միտք ունիս մեր դուռը փակես մեր վրայ, ինչպէս փակուեցաւ, սպասում ես, որ Սարգարի զինուորքը գան քեզ բռնելու, էն ժամանակը դու ինքդ քո ձեռքով քեզ սպաննու, չմտնում, որ քո մայրը մինչև նրանց գալը ինքն իրեն կրօնակնի թէ էս տեղ մնալու լինիս :

ՆԱԶԼՈՒ.

Վայ ինձ, էդ է իմ մխիթարանքը, ես ի՞նչպէս պէտք է մնամ առանց իմ Աղասուն, առանց իմ տիրոջը, նա ուր գնայ, ես էլ հետը կերթամ : Գու իմ մայր, իմ սկեսուր, դու մայր դարձի՛ր իմ երեխայիցը, ես Աղասուն միայն չեմ թողուլ. (Աղասուն) տա՛ր, տա՛ր ինձ հետդ իմ տէր, երեսս ոտքիդ տակը :

ՄԱՐԳԱՐԻՏ.

Թո՛ղ տուր Նազուլ, մի՛ խախտնիր Աղասու ճանապարհը, թող նա գնայ, տեսնենք դեռ գլուխներս ի՞նչ է գալի, եթէ կենդանի մնանք, ես կուղարկեմ քեզ, ուր և լինի նա :

ԱՂԱՍԻ.

Չէ, չէ, ես չեմ գնալ, ես պէտք է յետին շունչս տամ

իմ Նաղլուի գրկումը, իմ Նաղլուն չէ համաձայն գնալուս :

ՆԱԶԼՈՒ•

Դժուարին է ինձ բեզանից բաժանուելը, բայց ճար չը-
կայ, պէտք է վճռեմ այդ մահացուցիչ գործը, Տէր բնդ քեզ,
վեր կաց, գնա, մինչև Աստուած իր ողորմութեան զըռները
բանայ մեզ համար :

ՄԱՐԳԱՐԻՏ•

Էլ մի՛ ուշացնիր, որդի, արի, առ քո ծնողաց օրհնու-
թիւնն ու հեռացիր մի քանի տարի էս անհաւասաների աշ-
խարհքիցը :

ԱՂԱՍԻ•

Ես ի՞նչպէս թողում էս անմեղ աղջկանը (ցոյց տալով Թա-
գուհուն) զոհ լինել էն անիրաւ Պարսկի՛ էն անխղճմտանք Սար-
գարի կրիցը. եթէ երբ և իցէ ես իմանամ, թէ Սարգարը բռնի
տարել է սրան, իսկոյն հոգիս կըտամ. (դառնալով դէպի Թագուհին)
մի՛ հոգար, քոյր իմ, ես քեզ կազատեմ, ես քեզ խոստացել եմ
չթողուլ ոչ ոքի վնասել քեզ, ես հաստատ եմ իմ ուխտին :

ԹԱԳՈՒՀԻ•

Իմ ազատարար, իմ պահապան հրեշտակ, քո ծնողաց և
քո քաղցր Նաղլուի հետ և ես երեսս անկեալ պաղատում եմ
քեզ, զնա՛ օտար երկիր, ես ուխտում եմ այդ սուրբ դաշն ինքս
պահպանեմ, հետև իմ քո օրինակին, մեռնիմ քաջութեամբ և
Պարսկաց ձեռք չընկնեմ :

ՄՈՒՍԱ•

Ահա՛ Աղասի, և քո ազատած հրեշտակդ էմ կոյսը և
քո Նաղլուն ու քո խղճալի ծնողքը ամէնքը՛ ՚ի միասին քեզ
են ձայն տալի, ինչք՞ չես լսում դրանց, տես այս աղէտալի
տեսարանը, վեր կաց գնանք, հերիք է ուշանանք, թուրքերը
հիմա կը գան մեզ բռնելու :

ԱՂԱՍԻ•

Ո՛վ թշուառութեանս, հիմա յաղթուեցայ, եղբարք, ձիանքը

պատրաստեցէ՛ք. իմ գորովագութ ծնողք, օրհնեցէ՛ք ինձ, Նազ-
լու. մնաս բարեաւ յաւիտեան. Թագուհի, յիշէր Աղասուն և
իր քաջ ընկերացը. ան իմ մատղաշ ու անմեղ երեխայք, ձեր
տարաբաղդ հօրը չեն թողում գոնէ վերջին անգամ ձեր ե-
րեսը համբուրել, ո՛հ . . . ո՛հ . . .

ԾՆՈՂՔ՝ գրկելով եւ լալով համբուրելով.

Աստուծոյ սուրբ աջը քեզ հովանի լինի որչի՛ք սուրդ
թշնամեացդ արեամբը ներկուի ուր և լինիս, յիշէր քո տա-
րաբաղդ ծնողացը, քո թշուառ Նազու ին և սիրուն երեխայիցդ:

ՆԱԶԼՈՒՆ գլուխը կորացրած.

Տեսութեանդ արժանի լինիմ՛կամ՛թէ գերեզմանիս վերայ
մի քանի կաթիլ արտասուք թափես :

ՍՂԱՍԻ.

Մնաք բարեաւ իմ ծնողք, իմ Նազլու, իմ երեխէ՛ք, քա-
նաքեռի իշխանք, մնաք բարեաւ :

ՄՈՒՍԱ իր հօր գիրկն ընկնելով.

Մնաս բարեաւ իմ տարաբաղդ հայր, (նայելով Թագուհուն)
Թագուհի յիշէր խեղճ Մուսային . . .

Մուսան եմիւս ընկերքը չըջսպատած Աղասուն, ամէնքին մնաք
բարեաւ ասելով, դուրս են գնում, բողբոցունց աչքը մնում
է դռանը, որտեղից դուրս գնացին Աղասին եւ իր ընկերքը.

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԷՍ.

Ահա մեր սև օրը, մեր վախճանը մտեցաւ, բաւական է
որքան լաց էլանք, հիմա երևանումը մեզ սպասում է կախա-
ղան, կացին և այլ պատժելու գործիք. քանի Սարգարի մար-
դիկը չեն եկել, Յարութիւն, զնանք մեր գլխի ճարը տեսնենք,
գիւղը յանձնենք ուրիշի, մենք շուտով աշխարհքիցս կերթանք
դէպի յաւիտենականութիւն. Մարգարի՛տ առ Նազուն և զը-
նա՛ տուն, դուստր իմ Մարիամ, դու էլ թո՛ղ ձեր տունը և
զնա՛ մեր ընտանեաց հետ, մինչև տեսնենք վերջն ի՛նչ կը լինի:

Ամէնքն սկսում են դուրս գնալ :

Վարագոյրն իջնում է:

ԱՐԱՐՈՍԱԻԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Արայի սարը հազար տեսակ ծաղկե-
րով ու կանաչներով, հեռուիցը երևում է Մասիսը փոքր ինչ ամպերով
պատած, այս եւ այն կողմը լեռանց շարքեր եւ Արարատեան դաշտը,
որոյ վերայ է Էջմիածինը:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Աղասին իր ընկերներովը սկսում է բարձրանալ սարի վերայ, լի-
նելով ամենից առաջ եւ այս կամ այն կողմը նայելով, տեսնում է Մա-
սիսը, կանգնում է, նշանացի է անում ընկերացը հեռանալու, իսկ ին-
քը մի թփի տակ նստած՝ երգում է:

Սար ու ձոր ընկած՝ մէկ չոր թփի տակի,
Գետին նայելով՝ մնացել եմ նստած.
Ձեռս ծոցումս, դուլիս մէկ լեռ քարի
Տված՝ լայիս եմ՝ օրս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցը Մասիս,
Աղի արտասնքով էրված, խորոված,
Երեսից նայիմ, մնամ քարացած:

Ծնող, ազգական հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Եարաբ երբ կրլի, որ ես ձեզանից
Իմ փոփաքս առնեմ, ձեզ ջան ասելով:

Եարաբ ձեր ճառվել մէկ օր էլ կընկնեմ,
Եարաբ ձեր երեսն մէկ օր էլ կը տեսնեմ,
Եարաբ ծուռնի ծնկի տուած ձեզ կասեմ,
Ա՛յ իմ խեղճ ծնողք, ձեր ջանին մեռնեմ:

Խաղը վերջացնելով՝ դուլիս քարին տուած՝ մտածում է:

ՄՈՒՍԱ ներքեւը.

Տղայք, ի գուր թողնը մենք Աղասուն միայնակ սարի վե-

բայ, նա նշանացի պատուիրեց մեզ հեռանալ իբր թէ որս է
 գտել, բայց գիտէք, որ նա տեսել է սարի վըայիցը Մասեաց
 գագաթը կամ Երեւանու սարերը և այրած սրտով հիմա ար-
 տասուք կը լինի թափում: բարձրանանք սարը, նա հայրենեաց
 մի փոքրիկ նշոյլը տեսնելով՝ կորցնում է իրեն, մի՛ գուցէ մի
 վնաս հասնի նրան, կամ թէ երեւակայութիւնը վառուի և
 ինքն առանց մեզ ոչինչ ասելու գնայ Երեւան. . . . (յառաջ
 գալով դէպի ժողովուրդը) էլի Երեւանայ անուներ յիշեցի. . . . Էն-
 տեղ է քանաքեռը, իմ ծերունի հայրս և ան, այն աննման
 ու հրաշալեղ թագուհին: (Գնալով աղայոց մօտ) բարձրանանք
 տղայք, սարի վերայ:

ԿԱՐՑ ականջ դնելով)

Փոքր ինչ լուռութիւն, ես մի ձայն եմ լուռ: բայց հակա-
 ռակ քամին չի թողում պարզ լսելու: (Աղասին վերել հառաչում է)
 լսեցէ՛ք, ահա՛ հառաչանաց ձայն է գալի, նա լալիս է, գնանք,
 գնանք գտնենք նրան:

Վ.Ա.Ն.Ի տեսարանի խորքը նայելով.

Այս տեղ նայեցէ՛ք, ահա հեռուից մի քանի հոգիք պէպի
 մեզ են արշաւում, մի՛ գուցէ Սարգարի զինուորքը լինին, մի՛
 գուցէ իմացել են մեր այս տեղ գալը և շտապում են մեզ բռ-
 նելու, զէնքերդ պատրաստ պահեցէ՛ք, փութանք. գտնել Աղա-
 սուն, առանց նրա ոչինչ չենք կարող անել:

Վ.Ա.Թ.Ց նոյնպէս նայելով.

Ահա՛, ահա՛ գալիս են, վտանգի մէջ ենք, ես ասացի սկզբ-
 բումը, թէ որս գնալու յարմար միջոց չէ, այսպիսի տեղերը
 վտանգաւոր են:

Մ ՈՒ Ս Ա.

Երբէք հոգս մի՛ քաշէք, միայն շտապեցէ՛ք սարը. (ասում
 եւ բարձրանում են):

ԱՄԷՆՔՆ Ի միասին.

Աղասի, Աղասի, ո՞ւր ես գու:

ԱՂԱՍԻ ձայները լսելով եւ կանգնելով.

Ի՞նչ է, իմ սիրելի ընկերք, ահա ձեր թշուառ Աղասին,
 նա չի կորչիլ. դուք կարծում էիք, թէ էս ահագին լեռը կը

կլանէ՞ Աղասուն, երկիւղ մի՛ կրէք, մահն էլ ինձանից խռովել է, մտա եկէ՛ք, տեսէ՛ք ձեր սիրելի Մասիսը, անցել է տարին և մենք դեռ չենք տեսել նրա գագաթը, ծունկ չոքեցէ՛ք, երեսներդ գետնին քսեցէ՛ք, նայեցէ՛ք այս կողմը՝ ահա Գեղարդաւ վանքի սարերը, նրա ստորոտումն է Երևանը, այն տեղ է Գառաքեռը և մեր ընտանիքը :

ՄՈՒՍԱ.

Աղասի, անկարելի էր մեզ մեր փափաքն առնուլ Մասեաց լեռը տեսնելով, բայց դեռ վտանդից ազատուինք, Փամբակի կողմիցը մի քանի ձիաւորներ շտապելով եկան, իջան սարի տակին, ինչպէս երևում է մեր հետքն են բռնել նրանք, կարելի է Սարգարի վիճակը լինին, պատրաստուի՛ր, Աբարանայ եկեղեցունը նոցա միտքը բերենք :

ԱՂԱՍԻ.

Ո՛ւր են, ո՛ւր են, այդ անօրէնները էլի չեն ձեռք քաշում մեզանից, ի՛նչ, Աղասուն բռնելու են եկել, Ճշմարիտ է, Աղասին պէտք է զնայ Երևան, վրէժ առնի Սարգարից և մանաւանդ Հասան խանից, բայց դեռ ժամանակը չէ, սրտներդ ահ մի՛ ձգէք, թողէ՛ք գան. Մասիսին նայեցէ՛ք, նա ինձ քաջալերեց, բաւական է ինձ, եթէ մի անգամ աչքս ձգեմ Մասեաց ձիւնապատ կատարին . եկէ՛ք իջնենք դաշտը, այն տեղ լաւ պատերազմելու տեղ է, բայց ո՛չ, այն տեղից Մասիսը չէ երևում, այս տեղ մնանք, նոքա հիմա կը բարձրանան սարը :
(Ամէնքը նստում են եւ հրացանները պատրաստում) :

ԱՂԱՍԻ մէկ ձեռքին հրացանը, միւս ձեռքով աղայոցը :

Մի վախիք, խրախուսուեցէ՛ք, Աստուծոյ ամենակարող Աջը մեզ հետ է, ահա նրանք երևում են :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Կամաց կամաց բարձրանում են սարը մի քանի Փամբակեցիք և նոցա հետ Աւետիքը՝ Աղասու հօրեղբայրը :

ԱԻՆՏԻԲ.

Թողէ՛ք, թողէ՛ք, ո՛ւր է նա, թողէ՛ք գնամ՝ ոտքերն ընկ-

նիմ, նրա արեին մատող, անի, իմ անզոյդ Ազասի :

ԱՂԱՍԻ լսելով ձայնը եւ ճանաչելով.

Իմ հօրեղբայր, իմ պատուական հօրեղբայր, զու Արայի լեռան վերայ չվախելով դազաններից եւ աւազակներից, եկել քո կորած Ազասուն եւ որոնում. փառք քեզ Աստուած :
Վազում գիրկն է ընկնում.

ԱԻՆՏԻՔ.

Ազասի, իմ Ազասի (ասում եւ լուում է),

ԱՂԱՍԻ.

Իմ քաղցր հօրեղբայր, Աւետիք (ասում եւ լուում է),

ՏՂԱՅՔԸ մօտենալով եւ շրջապատելով.

Փառք քեզ Աստուած :

ՄՈՒՍԱ.

Ո՞վ կը կործէր, թէ Արայի լեռան վերայ Աւետիքը պէտք է դայ մեզ դանի :

ԱՂԱՍԻ.

Աւետիք, իմ հօրեղբայր դթառատ ծնողք
Իմ Նազըւ իմ երեխէ՛ք

ԱԻՆՏԻՔ.

Իմ անեման Ազասի՛

ՄՈՒՍԱ.

Իմ հայր Թագուհի՛ իմ հայրենի՛ք
(Աւետիքին) զնանք Աւետի՛ք, զնանք ներքեւ դաշտը, այն տեղ
աւելի լաւ տեսութիւն կանենք, բաւական է լաք :

ԱՂԱՍԻ.

Գնանք սիրելի՛ք, (ասում եւ յառաջ է ընկնում, միւսները նրա հետ. կամենում է Աւետիքին իր հետը տանիլ, բայց երբ տեսնում է Մուսայի հետ ի միասին, ինքն յառաջում է : Մուսայն եւ Աւետիքը իրար հետ կամաց քչփչալով ներքեւ են դալի. Մուսայն հոգոյ է հանում, Աւետիքը ձեռքով արդելում է եւ մատով Ազասուն ցոյց տալի :

ԱԻՆՏԻՔ տղայոցը դաշտի վերայ.

Եկէ՛ք համբուրեմ ամէնքիդ ո՞վ սիրելի՛ք, (համբուրում է) եւ ձեր բոլորի համար եմ եկել դուք ամէն նեղութիւն յանձն էք

տոնել իմ սիրելի Աղասու համար, Աբովնոյ տունը ձեզ աւելի է պարտական, եթէ դուք չլինէիք, մեր տան վերջին ճրագը հանդած կլինէր, ես գլուխս դոքս դրած եկելեմ ձեզ գտնել և փափաքս առնել, յետոյ ուրախութեամբ հողը մտնել: Եւ նորհակալ եմ նոյնպէս այս պատուական երիտասարդներինը, սոքա փամբակու մը ինչպէս լսեցին ձեր անունը, ուրախութեամբ ձի հեծան էս անդ գալու, սոքա ձեր տեղը գիտէին, ամբողջ օրը հետս չարչարուումն:

ԱՂԱՍԻ.

Դուք, իմ պատուական ընկերք, դուք փամբակու Հայոց բարեսրտութեան պատկերը, ասացէ՛ք, Աղասին ընչով պէտք է երախտահատոյց լինի ձեզ, եթէ ես փամբակումն ևս մեռանիմ, հոգ չէ, ձեզ նման ազնիւ սրտեր կան իմ սուգը անողներ: Ա՛խ, իմ մայրս, իմ Նազուէն էստեղ չեն ինձ վերայ ողբալու: Ահա՛ իմ հօրեղբայրը կը գնայ և ձեր քաղցր յիշատակը կը տանի իրա հետ իմ պառակեալ խղճալի մօրը:

ԿԱՐՑ.

Տար, պատուելի Աւետի՛ք, այս ազնիւ երիտասարդաց համբաւը մեր որդեկուրկ ծնողացը, ասա՛ փամբակումը ձեր օրդիքը անտէր չեն, այս քաջերի նման հիւրընկալ ընկերք օւնին, որոնք ամէն մեր տրտմութիւնը աշխատում են փարատել մըսիթարիչ խօսքերով:

ՎԱՆԻ.

Բայց պատմի՛ր, յարգելի Աւետի՛ք, մեր խեղճ ընտանեաց դրութիւնը, ի՞նչ վիճակի մէջ են նոքա, արդեօք գերեզման մտած հանդընում են, թէ իրենց կորած որդւոց համար դեռ սպում և կոծում են:

ՎԱԹԹ.

Արդեօք Սարգարը մեր վրէժը մեր տարաբաղդ ծնողքիցն առաւ, թէ արեանծարաւ գազանի նման դեռ մեզ է սպասուամ, որ իր ճանկը ձգի:

ԱՂԱՍԻ.

Պատմի՛ր իմ հօրեղբայր, պատմի՛ր մեզ ամէնը, մօտ տարի է կէս է մեր մտածմունքը միշտ այդ է, պատմի՛ր այն դաժան

ժամը, երբ մեզանից յետոյ Սարգարի զինուորքը յարձակուեցան Քանաքեռի վերայ :

ԱՒԵՏԻՔ .

Իմ սիրելի Աղասի, իմ պատուական եղբայրք, ես կը պատմեմ ամէն բանը, էլ ծածկելու ժամանակ չէ : Ձեր գնալուց մի ժամ յետոյ կարկտի պէս տեղացին պարսկական զինուորաց զնդերը Քանաքեռի վերայ, մենք մեր պատրաստութիւնը յառաջուց հոգացել էինք, ժողովել էինք եկեղեցու պարիսպը և այն տեղ ամրացել : Երբ հրացան արձակելուց դադարեցան, ներս մտան և ամէնքիս առաջ ձգած վարումէին զէպի Երեան, նրանց քարացեալ սրտին չէին ներդործում, ոչ երեսայից աղէտալի ճչալը, ոչ յղի և մանկատէր կանանց սուգն ու լացը, յետ ֆնացածին մտրակաւ, հրացանով ծեծում էին, անզօրների զլուխը կտրում էին և այսպիսի դառն հարուածներով տարան շքրին Երեանայ բերդը . իսկ Քաղուհուն և իր մօրը ամէնից յառաջ կապած տարան :

ՄՈՒՍԱ .

Վայ մեզ, էս ի՞նչ ցաւալի լուր . . . ին՞դ՞ Քաղուհի . . .

ԱՄԷՆՔԸ .

Խեղճ ծնողք

ԱՂԱՍԻ .

Ողորմելի անտէր Հայոց անգգ

ԱՒԵՏԻՔ .

Երեան մտանք, բոլոր Հայերը ողբում էին մեր վերայ, բերդումը պատրաստած էին կախաղաններ և այլ չարչարանաց դործիքներ : Սարգարի հրամանն էր իշխանացը կախել և այլոց բոլորին սուրը քաշել . մեր աչքերը կապեցին և դահիճքը պատրաստուեցան, սպասում էին Սարգարին, որ գայ այս անտարանին ներկայ դանուի : Յանկարծ հասաւ ոյդ ահուելի բոպէն . Սարգարը եկաւ և նստաւ իրեն համար պատրաստած անդումը . բայց Աստուծոյ ողորմութեան դռները բացուեցան և չորէ չոր յառաջ եկան Սվանդուլի խանը և մեր բարերար Մէլիք Սահակը : Սարգար, դռացին նրանք, ահա՛քս սուրը, առաջ հրամայիր մեզ զլիստուն, յետոյ այս անրազգ ժողովրդին, այս անմեղներին ինչ կամիս արա :

ԱՂԱՍԻ.

Աստուած հաստատ պահպանէ Մէլիք Սահակին, թէ նա չը լինէր էս անօրէնների ժամանակը, արդեօք երևան հիմա մի Հայ կը գտնուէր, քանի՞ քանի անգամ ազատելէ այդպիսի նեղութիւններէ մեր խեղճ ազգին :

ՄՈՒՍԱ.

Աստուած բարի տայ և Սվանդուլի խանին իր գործքովը, թէպէտ նա Պարսիկ է, բայց սասաիկ սիրումէ մեր ազգին :

ՏՂԱՅՔԸ.

Թողէ՛ք, թողէ՛ք պատմէ, տեսնենք վերջն ի՞նչ եղաւ :

ԱԻՆՏԻՔ.

Խան, Մէլիք, կանչեց Սարդարը զայբացած, ինչի՞ էք արգելք լինում իմ նպատակին, մեր սրերը բթացան՝ իսկ այս անհաւատների արմատը չկտրուեց. այս ի՞նչպէս ազգ է, որ քան կոտորում ես, այնքան բազմանում են, որքան նեղացնում ես, այնքան դժբանակում են. ատում են բոլոր փառք պատիւ և իշխանութիւն. իմ ցանկացածս մի աղջիկ էր, ես նրան փառքից աւել ոչինչ չպէտք է անէի, մի՞թէ երջանկութիւն չէր նորա համար իմ կին կոչուիլը, բայց նա ընդդիմանում է, նորա մայրը ճշում, աղապհում է և այն փուչ Ալասին յանկարծ որսեղից տուն է ընկնում և փոքր է մնում իմ Ֆարրաշնէրին սպանէ, ո՞ւր է նա, ա՛խ մի ձեռքս ընկնէր, ես գիտէի :

ՄՈՒՍԱ.

Ինչ կը գտնէր, արդէն վաղուց նրան հասած կը լինի Արարանայ եկեղեցու մօտի հարուածները :

ԱԻՆՏԻՔ.

Սարդար, երկրիս Տէր, աղաղակեցին Սվանդուլի խանը և Մէլիք Սահակը, մեղաւորին է հարկաւոր պատժել սոքա ի՞նչ անեն, մարդիկ ուղարկիր և զանել տուր յանցաւորին, իսկ էս անմեղաց արիւնը մեզ խնայիր : Ելէ՛ք, ելէ՛ք, ասաց Սարգարը, ձեզ եմ շնորհում սոցա պատիժը, թող բոլորը զնան, իսկ մինչև Աղասուն զանելը տասներկու իշխանք մնան այս տեղ բանտումը պատանգ, և այն անպիտան թագուհուն, Մէլիք, ասոր,

Թող առողջանայ, նա երկիւղից կարծեմ տկարացել է : Այսպէս, սիրելիք, ձեր բոլորի հայրերը մինչև ցայժմ բերդումն են, միւսները կրկին Գանաքեռ յետ դարձան և թշուառութեամբ անցընում են իրենց սև օրերը :

ԱՂԱՍԻ.

Հիմա մեր խեղճ ծնողքը տանջուում են շղթաների և կոճղների մէջ, վայ մեզ, իսկ ի՞նչ են անում մեր անբաղդ մայրերը, անտէր Նազլուս, իմ անմեղ երեխայքը :

ԱԻՆՏԻՔ.

Լսիր, Աղասի, թէ ի՞նչ էր ասում քո զօրութիւնից ընկած մայրը, ի՞նչ էին նորա վերջի խօսքերը, երբ ես հրաժարական ողջոյն էի տալիս նրան. «Աղասի, երեսու ոտքիդ տակն, Աղասի հայրդ Երեանայ բերդումն է անել բանտի մէջ իր զըլուխը լալով քեզ օրհնում, Նազլուդ էս տեղ է կիսամեռ մահի հետ կռուում, միայն ես, ես եմ իմ չորացած զըլուխը պահպանում, որ մէկ երեսդ տեսնեմ և քեզ մնաս բարեաւ ասեմ : Արի, որդի, եթէ ինձ չես կամենում գթալ, գթա՛ քո վերջին կէտը հասած Նազլուին և քո հայրակարօտ երեխայիցը, արի, սրանց մօտդ տա՛ր, զոնէ սրանք ապրին . քո Նազլուն էլ օվ ունի բացի քեզանից, հասիր որդի, քանի Նազլուիդ շունչը վըէն է :

ԱՂԱՍԻ.

Մայր, որդեկորոյս մայր . . . Նազլու, իմ Նազլու, սիրտս խորովում է անուշիկ յիշելով սարերի գլխին, ձորերի միջին, քո Աղասին, երեսիցդ զըլուած՝ քո սիրովն մաշուած, ի՞նչպէս մինչև հիմա կենդանի է մնացած : Ար գամ, իմ աննման ծնողք, կը գամ իմ հրաշալի Նազլու, կը գամ՝ կամ իմ զըլուխս էլ այդ տեղ մահու կը տամ, կամ ձեզ էլ կազատեմ այդ անօրէնների երկրիցը : Գնանք, եղբարք, գնանք Երևան, մեր ծնողքը կապանքի և բանտի մէջ մեր սիրովը տանջուում են, իսկ մենք ազատ և ուրախ օրեր ենք անցընում, փութանք Մուսա՛, ձիանքը հեծնենք և ուղղակի իջնենք Գանաքեռ :

ՄՈՒՍԱ.

Սուր խփիր սրտումս, Աղասի, քեզ Երևան գնալն անհը-

նարին է, առաջ մեզ բողոքիս զոհիր էս տեղ, յետոյ այդ վը-
 ճիւղը տնոր, եթէ մեռանելու ենք, ահա մեր հայրենի հողը,
 թող այս տեղ մեռանինք : Ո՞ր ես ուզում գնալ, անօրէն Հիւ-
 սէին-Սարգարը մօտ տարի և կէս է քո արեանն է ծարաւ,
 դոնէ մեզ խնայիր, որ կեանքներս յետ ենք զրիւ քեզ համար-
 լաւ մտածիր, մեզ Երեւան գնալն անկարելի է դեռ : Տեսնում
 ես այս պատուական Հայ երիտասարդներին (ցոյց տալով Փամ-
 բակեցոցը) Փամբակումը սրանք մեր պաշտպաններն են, այսօր
 էլ նոյն ընկերու թիւնը չեն խնայել մեզանից, սրանք կերթան
 և կը բերեն քո Նազլուին... ո՛հ, իսկ այն անմեղ... ո՛հ, ո՛հ...

ԵՐԿՈՒ ՓԱՄԲԱԿԵՏԻՔ

Աղասի, մենք չենք թողուլ քո սիրելի Նազլուին և երեսա-
 յիցդ, դու յետ դարձիր Փամբակ, մենք կերթանք կը փախցնենք :

ԵՐԿՈՒ ՈՒՐԻՇ ՏՂԱՅՔ.

Պատրաստ ենք Աղասու նման ազնիւ ընկերի համար մեր
 արիւնը թափել, դնանք լաւ ժամանակ է :

ԱԻՅՏԻՔ.

Ճշմարիտ, ես շատ սխալուեցայ, միայն սիրելիդ իմ, դու
 մի՛ գալ. այս քո Փամբակեցի ազնիւ ընկերացդ հետ ես ինքս
 կերթամ և կը բերեմ քո Նազլուին. զլուխս արեան մէջ, մի
 քանի օրից յետոյ կրկին քո մօտ կը լինիմ, քո Նազլուն և
 երեսայքդ էլ ի միասին. մնաս բարեաւ իմ սիրելի Աղասի, (զրկում
 է) մնաք բարեաւ և դուք իմ պատուելի եղբարք, Մուսա, Կա-
 բո, Վաթո, Վանի. իմ Աղասուս ձեզ եմ յանձնում և ձեզ
 Աստուածային խնամօքը : Գնանք ուրիմն, սիրելի բարեկամք,
 այս լեռան յետի կողմիցը Քանաքեռ, ես ձեզ հետ ի միասին
 կառնեմ իմ պարկեշտ հարսին և կը վերադառնանք Փամբակ :
 (Աւետիքը համբուրելով նրանց, դուրս է գնում Փամբակեցոց հետ, Աղա-
 սին իր ընկերներովը մինչև դուրը ճանապարհ է դնում նրանց ու յետ
 գալիս) :

ՏԵՍԱՐԱՆ Գ.


ԱՂԱՍԻ .

Սիրելի ընկերակիցք, շտապենք փոքր ժամանակ որս անել

և յետ դառնալ փամբակ, Աստուած էլի մեր հայրենի հո-
ղումը մխիթարեց մեզ, գնացէ՛ք ամէնքդ մէկ կողմով, իսկ ես
այս կողմից սարը բարձրանամ, այս լեռան որսն առատ է, այս
լեռքը անուանի լեռան է, սուրբ Վառվառ խա կուսի գերեզմանը
այս լեռան միւս երեսումն է, նորա հովանաւորութիւնը պահ-
պանում է մեր ազգի երեխայիցը ծաղկացաւից :

Մ ՈՒՍԱ տիրամած .

Գնանք եղբւ՛րք, իսկ մեր տեղը թո՛ղ այս դաշտը լինի,
այս տեղ ժողովնէք և այս տեղից զնանք ձիանքը հանելու այրի
միջից : (Գնում են) .



ՏԵՍԱՐԱՆ Դ .



ԱՂԱՍԻ միայն .

Մարդուս մի հոգսը չի սպանիլ, իմ Մուսայի վերայ մի
մեծ փոփոխութիւն եմ տեսնում ահա երկու շաբաթ է . թէ-
պէտ նա միշտ ախտը է եղել, բայց այս երկու շաբաթն ևս
աւելի . մանաւանդ այսօր քանի իմ հօրեղբայրը եկաւ և գը-
նաց . Մուսէն կտրծում է, թէ ինձանից ծածկել է իր սրտի
ցաւերը, չէ իմանում, թէ նրա տարբազր Աղասին դուշա-
կում է ամէն բանը . այսուհետև Մուսային միայնակ չպէտք է
բողած, նա իր գլխին մեծամեծ ֆլասաներ կը պատճառէ : Ո՛վ
կոյր բազր, որ միանգամ ծովն ևս ընկել, տարբազր Աղա-
սի՛, ինչի՞ քո պատճառաւ չորս քաջ ու ազնիւ պատանիք
պէտք է քարեքար տան հետդ իրենց գլուխը, դու ի՞նչպէս
պէտք է դոցա հրախալըիցը դուրս գաս : Գնամ ես էլ սարի
էս կողմը փոքր ինչ շրջելու, ահա երեկոյեան պահն է, պէտք
է յետ դարձած փամբակ . ամէնից աւելի գնամ Մուսայիս
զանեմ, ի դուր թողի նրան, ես մի այլ պատճառ եմ նկատում
նորա փոփոխմանը, նա սիրահարուած է երկուսի : (Գնում է) .

ՏԵՍԱՐԱՆ Ե՝

ՄՈՒՍՍ. միայն սարից իջնելով մինչև կէսը :

Հազեւ սիրտս մի փոքր հանգստացել էր. կրկին Աւետիքը վերդովեց, Նազլուն շուտով կը գայ, իսկ իմ աննման թաղուհի՞ն, ո՛հ, հիմա ո՞վ զիտէ Քրդերը կենդանի թողե՞ր են նրան թէ ոչ : Աւետիքը ինձ պատմեց, բայց ես վախումեմ Աղասուն ասել : Նա ի՞նչպէս չի տեսնում իմ սրտի փարու թիւնը . վա՛յ, վա՛յ, եթէ նա իմանայ, թէ իր Մուսան զիշեր ու ցորեկ հանդիստ չունի թաղուհիյն թողալու օրից, նա կրկին կուզէ երթալ Երևան, էլ չզիտէ, թէ Երևան ոչինչ չկայ : Ո՛հ, տեսնումեմ, տեսնումեմ, որ թաղուհիյն կանչում է ինձ աչքերն արօտասուօք լի . սաստիկ նեղութեան մէջ . . . տեսէ՛ք, տեսէ՛ք, անիրաւ Քրդեր, թէ ինչպէս սուրս կը թռցնի ձեր գըլուխը. թաղուհի, կը գամ քեզ սզատելու : Ո՛ւր ես, իմ առանձնութեան մէջ իմ միակ մխիթարութիւն, դու իմ սիրեկան երգարի ս՞վ ողևորութիւն, արի՛ սիրտ տուր ինձ, գոնէ այս երգեմ, որ մի փոքր հանգստութիւն լինի ինձ : (Երգում է) :

Հրեշտակ էիր, որ ինձ երեւցար, ախ, ինձ երեւցար,
 Երկրո՞ւմն ես ծնուել, թէ երկ՛քիցն իջար,
 Մէկ կեանք ունէի, էն էլ դու առար
 Ո՛վ իմ թաղուհի, արի՛, հոգիս ա՛ռ :

Երազ թէ քուն ինձ, ախ մահ են դառել,
 իմ սև օրս զիշեր՝ կեանքս խաւարել :
 Ի՞նչ պէտքէ անեմ, ո՞ւր եմ ապրում էլ,
 Թէ ոտքիդ տակին մատաղ չեմ լինիլ, ախ մատաղ չեմ լի՞՛

Ար գամ թաղուհի, կը գամ քո ոտքը,
 Քեզ մօտ է սիրտս, քեզ հետ իմ մտքը,
 Ե՞րբ կը լինի, որ քո աննման դէմքը
 Տեսնեմ, կատարեմ իմ տուած խօսքը :

(Խաղը վերջացնում է, նստում, զլուխը քարին դնում եւ քունը տանում է) :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Ա.Ղ.Ա.ՍԻ սարի վերայիցը տեսնելով Մուսային:

Ա՛խ, իմ ազնիւ Մուսա՛, գիտեմ, ի՞նչ կրակ է քեզ այրում, խորովում, բայց ի՞նչ անեմ, ինչի՞ սրտինդ չես պատմում, որ ցաւդ իմանամ և գլուխս քեզ համար մատաղ տամ: Ա՛խ, լաւ եմ իմանում, որ սիրոյ թեւն է երեսիդ հովահարել, բայց այս ի՞նչ բան է, մայր և ամուսին կրակ են թափում գլխիս. էլի դու ո՞վ սէր, ո՞վ բնութիւն, ուզում ես քո զօրութիւնը ցոյց տալ: Ա՛խ, ո՛ւր կորչի մարդ, որ քո ձեռքից ազատուի:

ՄՈՒՍԱ քնի միջից.

Էդուց, էգուց իմ սիրելի թագուհի, էգուց Ղարսայ սաբերումը կը տեսնես ինձ: (Ասում և վեր է թռչում):

Ա.Ղ.Ա.ՍԻ մօտ գալով և գրկելով.

Մուսա՛, դու որ սրտումդ էգպիսի հոգսեր ունէիր, ինչի՞ ինձ չէիր յայտնում: մի՞թէ քար եմ, որ չզգամ ամէն բանը, այդ է քո սէրդ և սիրտդ, որ ինձանից բան ես թագցնում, վեր կաց, ասա ճշմարիտը, ո՞վ է այդ թագուհին, որ քեզ տանջում և մաշում է, մի՞ գուցէ մեր ազատած թագուհին լինի, բայց նա Ղարս ի՞նչ բան ունի:

ՄՈՒՍԱ կամելով թագցնել.

Ոչինչ չկայ, ես բան չեմ ասել:

Ա.Ղ.Ա.ՍԻ.

Սիրելիդ իմ, սաս՛, մի՛ ամաչիր. դու դեռ փոքր ես, դեռ այդպիսի բաներ քեզ շատ պէտք է պատահին, ի՞նչ ես կարծրում և գլուխդ խոնարհացնում, ասա՛ տեսնեմ: Ասում ես Ղարս է, ահա՛ Ղարսը մի աւուր ճանապարհ, ի՞նչ ես հոգում դրա համար, այսօր կարող ենք գնալ և կէս գիշեր չեղած, կը մանենք այն տեղ:

ՄՈՒՅԱ.

Աղասի, կամ ինձ սպանիր, կամ Թագուհուն հասցրու ինձ, մեր Քանաքեռից դուրս գալու օրից իմ սրտումն ծխում էր Թագուհու սէրը, բայց ես քեզ չէի յայտնում: Այս քանի ժամանակ է, ես զգում էի, որ մի թշուառութիւն է պատահել նրան և չէի կարողանում հաւատարի լինիլ: Քանի մի օր էր, որ նրա աներեւոյթ ձայնը հետս միշտ շրջում էր. «Մուսն, քնիր, ես աչք փակեմ, երազիդ մէջ հետք խօսիմ», մէկ օր էլ երբ ծառի տակ փոքր ինչ հանգստանում էի, երազում Թագուհին մի բաժակ գինի բերեց ինձ և տալով՝ ասաց. «Մուսն, կամ այս բաժակը խմիր, կամ ինձ սպանիր, իմ կեանքս քո ձեռքին է, անօրէն Քրդերը գերի տարան ինձ Քանաքեռից Ղարս, և ահա՛ անհաւանների ձեռքին եմ. Ղարսայ սարու մն է մեր վրանը, թէ սիրտ ունիս, արի՛ ինձ ազատիր, ապա թէ ոչ, դու լաւ օր չես տեսնիլ. քսան օր է ինձ տանջում են, որ հաւատօ փոխեմ և Քրդի փաշայի կին լինիմ, բայց ես չեմ համաձայնում, քեզ եմ սպասում, ինձ երազում ասացին, որ իմ ազատողը էլի դու և քո ընկերքն էք. Մուսն, խնդրիր իմ ազատարար Աղասուն, նա ինքը քեզ կօգնի, նա ինձ համար այդ քան նեղութիւն յանձն առաւ, նա ինձ խոտացել է չլծողաւ անօրինաց ձեռքին: »

ԱՂԱՍԻ.

Եւ դու մինչև հիմա այդ բանը չե՞ս տեսլ, քարասիրտ Մուսն, մինչև ցայժմ դու չկարողացա՞ր վստահանալ քո Աղասու սիրոյ և հաւատարմութեան վրա:

ՄՈՒՍՍ.

Իմ չյայտնելու պատճառը այս էր, որ ես կարծում էի, թէ երկատարդական վառ երեւակայութիւն լինի այդ և այլ ոչինչ: Բացց աւանդ, այսօր սարից իջնելուս քո հօր եղբայրը ծածուկ ինձ յայտնեց բոլորը: Ահա սիրելի եղբայր, Թագուհին՝ քո ազատած Թագուհին, իմ հոգեհանը դատն նեղութեան մէջ մեզ է սպասում, խիղճս տանջում է, ողորմելին ձեռքերը բաց մեզ է կանչում, հասնինք Աղասի, Աստուած է մեզ ուս

դարկողը, թագուհու համար ենք այս քան նեղութիւն յանձն
առել, տանից անդից աքսորուել :

ԱՂԱՍԻ՝


Ուրեմն այժմ թագուհին Ղարս է, Քրդերի ձեռքն . . .
խեղճ թագուհի : . . . Իմ բարեսիրտ հօրեղբայրս, վախում
էիր որ քո Աղասին աւելի վշտանայ, էն պատճառով չէիր ա-
սում : Բայց Մուսն, լաւ նայի՛ր քո Աղասուն, քանի բերա-
նումը շունչ կայ, քանի բազկումը զօրութիւն, պէտք է
վրէժ առնի իր ազգի թշնամիներէ, դու ի՞նչ ես կարծում,
Աղասին կը համբերի՞ մինչև Քրդերից մի քանիսին էլ Սար-
դարի զօրաց հետ չուղարկի Մահմեալի դժոխքը . ես Ղար-
սումն էլ պէտք է ցոյց տամ, թէ Հայոց մէջ ևս կայ հօղի ի-
րենց անունը պահպանելու, Հայերը ճանճ ու մժեղ չեն, ինչ-
պէս մինչև հիմա ուրիշները կարծեւ են, Հայերը խոտակեր չեն,
կը զայ օրօր Հայոց թափած արեան փոշիէր կըբուսնին նախ-
նի քաջերին հետևողք, և յոյս ունիմ, որ մեք այն իսկ շա-
ռաւիղիցն ենք :

ՄՈՒՍԱ՝


Ուրեմն շուտով կերթանք Ղարս և իմ հրաշագեղ թա-
գուհուն երկրորդ անգամ էլ կազատենք գիշատիչ գազանից :
Թագուհին, ա՛խայն անմեղ կոյսն էր, որ մեզ այս անգը ձգեց :

ԱՂԱՍԻ անսարանի խորքը նայելով .

Ահա գալիս են մեր քաջ բնիկերքը, շուտով կերթանք և
գեռ կէս գիշեր չեղած՝ Ղարս կը մտնենք :



ՏԵՍԱՐԱՆ Է՝



ՆՈՅՆՔ և ՎԱԹՕ, ԿԱՐՕ և ՎԱՆԻ՝

ՎԱՆԻ՝

Աղասի, ահա երեք եղջերու սպանել տարել ենք այրը
ձիանց մօտ, գնանք, վերնենք և յետ դառնանք Փամբակ, ար-
գէն ժամանակ է :

ՎԱԹՕ՝

Ապրի՛ կարօն, ինչպէս ուղղակի կ'ըրճքի տակիցը անց-
կացրեց իր գնտակը :

ԿԱՐՕ.

Հապա՛ Ղու՛ որ խսկ Քւղեղեցը զարկեց՛ր և այն ահագին կենդանւոյն մի հարուածով գետին ձգեցիր :

ԱՂԱՍԻ.

Իմ քաջ ընկերք, ես նոր չեմ փորձել ձեր բազկի զօրութիւնը, մի՞թէ մտքիս չէ Սբարանու եկեղեցունը, թէ ի՛նչպէս մեզ հետ ընկնող թուրքերին ցոյց տուիք սուրբ եկեղեցւոյ զօրութիւնը. միայն բանն այդ չէ, մենք շատ դործ ունինք, լոյս չբացուած՝ Ղարսայ հողումը պէտք է լինինք. իմ հօրեղբայրս պատմել է Մուսային, թէ թագուհին նեղութեան մէջ է, Քրդերը տարել են նրան Ղարս, խսկ ինքը թագուհին ևս երազի մէջ Մուսայի ձեռքով մեզ կանչել է : Մենք այսքան նեղութիւն կրում ենք թագուհու համար, էլ ինչի՞ ենք պէտք աշխարհիս երեսին, եթէ երկրորդ անգամ ևս նրան օգնութիւն չհասնինք :

ԿԱՐՕ.

Թագուհին Ղարս, խեղճ աղջիկ, ի՛նչպէս ատրտազգ և զաւ. բայց մենք ի՛նչպէս կարող ենք լոյսը չբացուած Ղարս լինել. մինչև Ղարս երկու աւուր ճանապարհ է :

ՄՈՒՍԱ.

Իմ քաջ ընկերք, այս բանը երկու շաբաթ էր ինձ սաստիկ նեղացնում էր, այսօր ևս Աւետիքը Աղասիից ծածուկ ինձ առաց սարից իջնելու : Կէս ժամ յառաջ այս տեղ միայնակ նստած քունս տարել էր և վերջին անգամ այն հրաշալի . . . ո՛հ . . . կոյր եկաւ ինձ խնդրեց, որ եթէ մինչև վաղը չք հասնենք իրեն օգնութիւն, Աստուած մեզանից կը պահանջէ նորա անմեղ արիւնը :

ԱՂԱՍԻ.

Ղէ՛ քաջերս, քաջ մարդոյ համար ոչինչ զժուար բան չը կայ, թագուհին նեղութեան մէջ է, Աստուծոյ անունը ասնք, հիծենք ձխանքը, հասնենք նրան օգնելու, Աստուած մեզ կօզնի, մի՛ վախիք, նա միշտ մեզ հետ է, մեր բազկայը ոյժ տուող, հապա՛, Աստուած կանչենք, հիծենք ձխանքը և մինչև Ղարս :

ԱՄԷՆՔԸ.

Ետպի՛նք, շտապի՛նք, թագուհու արիւնը մեզ համար թանկ է, գնանք աղատենք թագուհուն :

Ամէնքը դուրս են գնում :

Վարագոյրը իջնում է :

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է Անի քաղաքի մէջ մի աւերակ, այս եւ այն տեղ քարեր են թափած : Աւերակի մէջ տեղը կրակ է վառուում, մի քանի ֆուրդ նստած կրակի շրջակայքը, շամփուրները ձեռներին խորոված են անում եւ ուտում, երբեմն երեսները դարձնելով դէպի տեսարանի խորքը, մատով սպառնում են, որ ձայն չհանեն, երբեմն խրար հետ անխօս ծիծաղում են :

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Աղասին ներս է մտնում լուռ ու մունջ, գնում է դէպի ֆրդերը, մէջ տեղը կանգնում, երբեմն խոժոռ դէմքով նայում է ֆրդերին, երբեմն միւս կողմերը, առնում խորովածի մէկ շամփուրը կրակի վրայից, մի երկու կտոր ուտում, մնացեալը կրկին կրակի վրայ ձգում : Ֆրդերը մնացել են սարսափած, կարծելով թէ դեռ է : Գրսիցը լսուում է մի ձայն,

ՄՈՒՍԱ զրսից.

Աղասի՛, ո՞ր տեղ ես :

ԱՂԱՍԻ գոռալով.

Քաջացէ՛ք տղայք, ֆրդեր են, առաջները կտրեցէ՛ք :

ՔՐԴԵՐԸ շփոթուած.

Աղասին է, Աղասին :

ԱՂԱՍԻ ներսից.

Մուսա՛, մի՛ թողուէք : Կամելով դուրս գնալ .

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՄՈՒԹԸ ԽՈՐՔԻՑԸ յանկարծ մի քանի ձայն.

Ի սէր Աստուծոյ, զրանց մի՛ թողուէք փախչին, մեզ ազատեցէ՛ք, մենք Հայ Քրիստոնեայ ենք :

ԱՂԱՍԻ յետ նայելով եւ ձայն տալով:

Մուսա՛, կոտորեցէ՛ք, հասէ՛ք :

Ինքն էլ զուրս է փախչում: Էս միջոցին տեսարանի խորքիցը զուրս են թափում զանազան կարգի ֆրատստանցի Հայ ժողովուրդք, արք, կանայք, ծերք, պատանիք, երեխայք:

ՄԻ ՔԱՆԻՍՐ նրանցից:

Աղասին է եղել սա՞ է Աղասին :

ՄԻ ՔԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԻՔ:

Ի՞նչ ենք կանգնել, գնանք մենք էլ օգնենք :


Վերցնում են ֆրդերի աէգերն եւ զուրս վազում:

ԱՌԱՔԵԼ մի ծերունի

Ճշմարիտ ի՞նչ քաջ մարդ էր, անոււնը լսել էինք, իրեն չէինք տեսել :



ՏԵՍԱՐԱՆ Գ.



ԱՂԱՍԻ, ՄՈՒՍԱ, ԿԱՐՕ, ՎԱԹՕ, ՎԱՆԻ, եւ միւս ֆրատստանցի երիտասարդները մի ֆրդի կապած՝ ներս են բերում :

ԱՂԱՍԻ ժողովուրդին.

Ահա՛ ձեր թշնամիքը բոլորը կոտորուեցան, սա միայն մընաց, որ կապուած՝ ձեր զերին է հիմա :

ԺՈՂՈՎՈՒՐԳ Աղասու ոտքերն ընկնելով.

Դու մեր ազատարար, դու մեր փրկիչ, քեզ Աստուած էստեղ ուղարկեց, մեր կեանքը քեզ ենք պարտական :

ԱՂԱՍԻ վեր կացնելով.

Վեր կացէ՛ք, ո՛վ Աստուծոյ օրհնած եղբարք, ես էլ ձեզ նման մարդ եմ, Աստուծոյն փառք տուէ՛ք, այսուհետեւ զուք ազատ էք, միայն թէ թողէք ձեզանից մէկը պատմէ, տեսնենք ո՞վ էք դուք կամ ուստի՞ :

ԱՌԱՔԵԼ.

Մեր բարերար, մենք Ղարսայ զիւղերիցն ենք, հազիւ օրական ապրուստ ճարելով կարողանում էինք մեր քրիստոնէ-

ութիւնը պահպանել, բաւական չեն այն ծանր հարկերը, որ մենք տալիս ենք, այս անօրէն ֆրդերն էլ մեզ հանդիստ չեն տալիս, ամէն ժամանակ քաշում են մեր երեխայքը, ընտանիքը և շատ անգամ ամբողջ գիւղը, ասնում Պարսից հոյք կամ Երևանայ Սարգարին ընծայում, անխ, արդեօք Աստուած մեր Հայերին մէկ դուռը կը բանայ, մինչև երբ օտարի ձեռքի տակ պէտք է ճնշուինք ու տանջուինք :

ԱՂԱՍԻ.

Ո՛վ Աստուած, ես այնպէս գիտեմ, թէ միայն մեր երկիրը անօրէն Պարսկաց խողալիք է գարձած, այնպէս գիտեմ, թէ միայն մենք ենք անտէր ու անօգնական, մի՞թէ ամէնտեղ Հայ սղղը գերի է և օտարաց սրին կերակուր. Տէր Արարիչ, ի՞նչ է մեր մեղքը, որ այսքան տարի չկարողացանք ապաշխարել :

ՄՈՒՍԱ.

Երևի, մեր ճակատագիրը էսպէս է գրուած, մեր մխիթարութիւնը էս աշխարհքումը չը պէտք է լինի :

ԱՂԱՍԻ Քրտատանցի Հայերին.

Էս ի՞նչ տեղ ենք մենք, կղզւորք, էս տեղ մեր առաջին գալն է, մանաւանդ գիշեր է և ոչինչ չենք տեսնում, մենք Ղարս պէտք էր գնայինք և չգիտենք ո՞ր կողմն ենք զնացել :

ԱՌԱՔԵՆ.

Էս է Անի քաղաքը, մենք հիմա նորա մի աւերակի մէջ ենք, էս քաղաքը սուրբ Յօհան Երզնկացու անէծքով կործանուեցաւ, հիմա միայն աւերակներն են մնացել և Քրդերի ու աւազակաց բնակարան է դարձել, ճշմարիտ որ անիծած քաղաք, Քրդերը որ մեր տունը յափշտակում են, այս քաղաքի մէջ են թախ կենում :

ԱՂԱՍԻ.

✓ Այս Անի քաղաքն է, Հայց թագաւորանիստ քաղաքը, անխ, երբեմն էս տեղ Հայոց քաջ թագաւորներն են բնակուել հիմա Քրդերի և աւազակների բնակարան է դարձել, էս էլ մի տարաբաղդութիւն Հայոց համար. խեղճ իմ անգ, այնքան մեղաւոր ես, որ քո թշնամիքդ քո բուն քաղաքու մն իրենց

դարանը հաստատելով, քեզ նրա մէջ են կլանում. ո՛հ դառն վիճակ. Մուսան, դու նայի՛ր այդ թշուառ ժողովուրդին, ես կամենում եմ գնալ ամբողջ քաղաքը զննել, սիրտս չէ հանգստանում :

ՄՈՒՍԱ.

Աղաթի՛, իմ ազնիւ եղբայր, մտածի՛ր այս կէս գիշերին ի՛նչ կարող ես առնել սպասենք զեռ լուսանայ, դեռ Ասածոյն փառք ամենք, սիրտ ամենք այս խեղճերին :

ԱՂԱՍԻ սղեորուելով.

Թող տու՛ր, Մուսան, միտքս մի բան ընկաւ, Աղաթին չի դուրս գնալ Անիից, Աղաթին կրմնայ էստեղ, եւ իր քաջ հայրերի փառքը կը վերանորոգէ : Դու՛ք, եղբարք, (Քրդասանցի Հայրւն) գնացէ՛ք, բերէ՛ք Քրդերի աւարները, բաժանենք այս խեղճ ժողովուրդի վրայ :

Մի քանի երիտասարդք դուրս են գնում.

ԱՂԱՍԻ.

Մուսան, վճիռս հաստատ է, մնանք այս քաղաքումը եւ վերանորոգենք :

ՄՈՒՍԱ.

Դեռ յիշի՛ր ո՛ւմ համար ենք եկել, դեռ գնանք խեղճ Թաղուհուն ապաստանք . . . Թաղուհի . . . Թաղուհի :

ԱՂԱՍԻ.

Աղաթենք Թաղուհուն, բերենք այս տեղ եւ բնակուինք այս քաղաքումն :

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Ներս են դալի Քրտասանցի Հայերը Քրդերի շորերը եւ զէնքերը ձեռքերին :

ԿԱՐՕ.

Էս ո՛րքան զէնք, ո՛րքան հարստութիւն :

ԱՌԱՔԵՆԷ.

Էս ամէնը մեր խեղճ Հայերից կողոպտածն է :

ԱՂԱՍԻ.

Ի՞նչ էք կործում, այս գիշեր կարող ենք այս տեղ համա-
գիտա մնալ, ոչինչ տեղեց երկիւղ չի՞ լինիլ :

Հասարակ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ.

Տէր, քո գլխին մատաղ, մենք չգիտենք, թէ էս անօրէն-
ներիցն էլ կան, թէ ո՛չ, բայց զգուշութիւն է հարկաւոր, սը-
րանց ձեռքից ոչ ոք չի ազատուիլ, փառք Աստուծոյ, հիմա
սրանց նման հազար դազան մեր վերայ յարձակին, ոչինչ չեն
կարող առնել, մի սուր միայն լինի մեր ձեռքին, մենք գիտենք,
թէ ի՞նչպէս վրէժ կառնենք սրանցից, դու միամիտ կաց, մենք
զգոյշ ենք :

ԱՂԱՍԻ.

Միշտ պէտք է զգոյշ լինէիք, որ այս տեղը չքնկնիք, հիմի
զգոյշ լինիլը հէրիք չի՞ մի՞թէ դուք կարծում էք, թէ Քրդերը
ձեզանից քաջ են, դուք էլ սուր ունիք, դուք էլ ձեռք բարձ-
րացրէ՛ք, տեսէ՛ք, թէ ի՞նչպէս նրանք իրենցը պահում են, ՚ի
հարկ է եթէ դու յօժարութեամբ և երկչոտութեամբ անձ-
նատուր լինիս բռնաւորին, նա ոչ միայն քո կայքդ կը յա-
փըշտակէ, այլև քեզ կպանէ :

Հասարակ ԵՐԿՈՒ ՔԱՋ ԵՐԻՏԱՍԱՐԳ.Ք.

Ո՛վ Տէր, ինչքէս թողում հասա այս Քրդին կենդանի,
մեզ հրամայիր սրան էլ սպանենք, մեր սիրտը հովանայ, սա
զլնաւորներից մէկն է :

ԱՂԱՍԻ.

Չէ, եղբա՛րք, սանձեցէ՛ք բարկութիւններդ, թողէ՛ք սրան
կենդանի մնայ, դեռ սրա գլխին շատ բան պէտք է գայ :

ՄԻ ՀԱՅ.

Ի՞նչես հրամայում, Տէր, թող, թող սրանից մեր վրէժն
առնենք, սրանք մեր աները քանդեցին, մեր երեխայքը սուրը
քաշելով վերջացրին, թող սրան էլ միւսների հացիցն ուտե-
ցընենք, սրանք Քուրդ են, սրանք Հայի արեանը ծարաւ են,
երբ և իցէ մեզանից կը հանեն այս վրէժը .

ՔՈՒՐԴԸ.

Քաջ Հայեր, մենք մեր մեզաց պատիժն առանք, խնայեցէ՛ք ինձ, ես ձեզ մի բան կատեմ : Իմ ընկերքը սրանց բերելուց յառաջ ինձ յանձնեցին մի աղջիկ, որ բերեմ այս տեղնա հեռու երկրից էր, ոտքով չէր կարողանում գալ, ես նեղացայ, ձեռքն ու ոտքը կապեցի և այս տեղ մի մօտիկ աւերակում վեր ձգեցի, նրա մեղքն էր, որ մեզ բռնեց և Աստուածանից էր, որ ես միայն ապրեցայ, որ այն աղջիկը չկորչէ, դունանք, բերենք նրան, քանի զազանք չեն պատառել : Մենք պէտք է խորովածն ուտելուց յետոյ կրկին գնայինք նրան բերելու, բայց մեր գլխին հարամ եղաւ :

ԱՂԱՍԻ.

Տղայք, կարելի է սա խաբում լինի, կարելի է սա ուրիշ բնիկերը ունի դուրսը և հիմա կամենում է մեզ տանիլ կուտորել տալ բայց մի՛ վախիք, ես ինքս մի քանի հօղուով կերթամ, եթէ ճշմարիտ է սրա ասածը, կազատենք սրան, իսկ եթէ ո՛չ, երդուում եմ բոլորիդ առաջին, որ մի Ֆօլբոգ չեմ թողուլ երկրիս վերայ : Մուսն, դու արի՛ հետս, քաջ երխտասարդք, միքանխոջ հետևեցէ՛ք ինձ, առէ՛ք այդ սրերիցը գնանք, Կարօ, դու միւսնեերի հետ զգոյշ պահպանի՛ր սրանց :

ՄՈՒՍԱ.

Գնանք Աղասի՛, սիրտս մի բան է զգում, մի՞ գուցէ դա իմ թագ գնանք, գնանք :

Դուրս են գնում.

ԿՍՐՕ.

Վլաթօ՛, վանի՛, դուք աւերակի այդ կողմը կանգնեցէ՛ք, եղբայրք, ամէնքդ էլ զգոյշ կացէ՛ք :

ԱՌԱՔԵԼ.

Դուք պտտուական երխտասարդք, ասացէ՛ք մեզ : դա այն Աղասին է, որի անունը բոլոր երկիրը բռնել է և ասում են թէ հիմի Փամբակումն է լինում, մենք դրա քաջութեան համբաւները շատ էինք լսել բայց իրան չէինք տեսնել Աստուած մեր ցանկութիւնը կատարեց, ամէն որ աղօթք էինք անում

Աստուծոյ, որ գայ էս անիրաւ Քրդերի յարձակմանքից մեզ ազատէ և ճշմարիտ որ ազատեց :

ՄԻ ՀԱՅ՝

Ի՞նչ շքեղ կերպարանք, ի՞նչ հսկայական դէմք, մեր Ղարսայ փաշէն եթէ դրան տեսնի, շատ կը սիրի, նա սաստիկ ցանկանում է տեսնելը, շատ անգամ մեր իշխանների մօտ գովել է դրան :

Վ.Ա.ՆԻ՝

Աղասու քաջութիւնն և քաղցր բնաւորութիւնն է. սր տարի ու կէս է մեզ իրեն հեռ պահում է, եթէ նա չը լինէր, մենք վաղուց զլիններս կորցրել էինք, քանի՞ անգամ աղատել ենք խեղճ ճանապարհորդներին աւազակների ձեռքից բոլոր մեր սիրելի Աղասու շնորհքով : (Գրսիցը ձայներ է լսուում «Փնաք Աստուծոյ» :

ԿԱՐՈ՝

Ականջ դրէ՛ք, ահա ձայն է գալի, կարծեմ՝ նրանք լինին, ի՞նչպէս շուտ վերադարձան, Աստուած տար՝ ճշմարիտ լինէր :

ՏԵՍԱՐԱՆ Ե՝

Ա.Ղ.Ա.ՍԻ, ՄՈՒՍԱ, ԹԱԳՈՒՀԻ և միւս երիտասարդները.

Ա.Ղ.Ա.ՍԻ Թագուհու կուսը բռնած.

Փառք տուէք Աստուծոյ, իմ քաջ ընկերք, մեր այս տեղ դալը առանց Աստուծոյ կառքի չէր, մենք եթէ Ղարս գնացինք, այս բոլոր ժողովուրդը և այս անմեղ աղջիկը պէտք է դազանաց ճանկն ընկնէին :

ՄՈՒՍԱ, նայելով Թագուհու երեսին.

Ո՛վ Աստուած, ի՞նչ եմ տեսնում, Թագուհին, իմ աննման Թագուհին, ո՛վ իմ կենաց մէջ ամէնից քաղցր օր

Ա.Ղ.Ա.ՍԻ՝

Փառք քեզ Աստուած, Թագուհի՛ն, . . . ո՛վ անհաս սնօ՞րէնութեանդ Արարի՛չ :



ԸՆԿԵՐՔԸ.

Էս ի՞նչ հրաշք

ԱՂԱՍԻ.

Թագուհու համարՂարս պէտքէ զնայինք, Անիուժը գտանք:
ԹԱԳՈՒՀԻ.

Ի՞նչքան ողորմած ես դու Արարիչ Աստուած, ես կրթ
կը մտածէի, թէ Աղասին, որ Սարգարի ձեռնիցն ազատեց ինձ,
էս օր էլ պէտք է Քրդի փաշեցն ազատէր :

ՄՈՒՍԱ.

Ուրախացիր Թագուհի, Աղասին ու իր ընկերքը քեզ չեն
մոռացել: Մուսան քո համար զլուխը մահուան կը տայ :

ԹԱԳՈՒՀԻ.

Ի՞մ անցեալ օրուան երազը կատարուեցաւ, Քրդերի ձեռ-
քից դուք ինձ ազատու՞էիք և դու Մուսա, իմ թուլացած
ժամանակ մի սառը ջուր տուիր ինձ :

ԱՌԱՔԵՆԻ Կողմը.

Սրանք էս աղջկանն ի՞նչպէս են ճանաչում:

ԱՂԱՍԻ.

Մեծ ես Աստուած և սքանչելի են քո գործերը, քանի՞քա-
նի միջոցներով օգնութիւն ես հասնում քո ժողովրդին, եթէ
Թագուհին չը լինէր, մենք աշխարհէ աշխարհ տարագիր չէ-
լինք ընկնիլ, հիմա էլ եթէ Թագուհին չը լինէր, մենք Անի.քա-
ղաքը չէինք գալ և այսքան անտէր դերդաստանին ազատել,
երևում է, որ Թագուհու պատճառաւ մի ապաղայ է պատրաստ-
ուած Հայոց ազգի համար : Մուսա, Թագուհի, այսքան հո-
գիների ազատութեամբը ձեզ ենք պարտական, Աստուծոյ սուրբ
կամքն է, որ երկուսդ ի միասին պէտք է բաղդաւորիք էս աշ-
խարհումը :

ՄՈՒՍԱ.

Մեծ բաղդաւորութիւնն այս է, որ այսօր ազատեցինք
Թագուհուն և նորա պատճառաւ այսքան ժողովրդին :

ՎԱԹՅ.

Առնենք, Աղտի՛, առնենք Թագուհուն, սանի՛ք փամբակ,

Նազըւն էլ շուտով կը գայ, ի միասին կապրին ուրախութեամբ
և մենք էլ երջանիկ կանենք Թագուհու և Մուսայի կեանքը:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Աղասու սաքերն ընկնելով.

Ո՛վ ազատիչ մեր, դու մեր փրկողն եղար, մեզ մեր եր-
կիրը հասցրու, ապա գնա՛ :

ԱՂԱՍՒ.

Ի՞մ եղբարք, խեղճ անտէր Հայոց ազգ, ամէնքս էլ Աստու-
ծոյ ծառայքն ենք, Աստուած է մեզ այս տեղ ուղարկել մի՛ վա-
խիք, ես ձեզ չեմ թողուլ, ձեզանից մեծ խնդիր ունիմ, որ
յուսամ կատարէ՛ք, բայց դեռ սպասենք: Ես լսել եմ, որ Անի
քաղաքը հինգ հարիւր տարի է քանդուել է, մինչև այսօր մեր
եկեղեցիքը բացի անհաւատ Գրդերից և աւազակներից ոչինչ
չեն լսել և տեսել, եկէ՛ք ծունկ չոքէ՛նք, փառարանենք Աստ-
ծոյն, այսօր սկսաւ Հայոց փրկութեան և վերակենդանութեան
սկիզբը, այսուհետև յուսամ, որ Հայը հնարք կը գանի իրեն
փրկութեանը:

Ամէնքը ծունկ են չոքում, Աղասին իր ընկերներովը
երգում է իրենց սովորական աղօթքը:

Խեղճերի Աստուած, դթած ողորմած,
Նայիր երկնքից անտէր Հայ ազգին,
Ամէն կողմանէ նա յոյսը կտրած՝
Քեզ է սպասում, հասցնես իր փառքին:

Տուն ունի խլած՝ երկիրն այլք ուտեն,
Իր հայրական տանն ինքն է բանտարկուած,
Մեծ մասն էլ ցրուած՝ այլ երկրում կորչին,
Կամ օտար ծիսից լինին ենթարկուած:

Օսմանցին ու Քուրդ Պարսիկ, Վրացին,
Յոյնք, Հագարացիք և այլ շատ ազգեր
Հայոց աշխարհը իրարից խլեցին,
Հայն արտաքսեցին, իրենք եղեն տէր:

Միթէ վերջ չկայ այս աղէտքներին,
Որ անօրէններն մեզ են պատճառում,
Գու Տէր, տէր դարձիր անտէր Հայ ազգին,
Ժողովր կրկին Հայքն իրենց երկրում:

Կարգի՛ր Անոյ մէջ մի հովիւ արթուն,
 Սիրելի իրեն ազգ և հայրական տունն.
 Տուր ամէն Հայի հոգի քաջութեան,
 Յրուել անհաւատքն, թափելով արիւն :

Կամայ կամայ սկսում է լուսանալ :

ԱՂԱՍԻ շրջակայքը նայելով և զլուխը շարժելով .

Չը դիտեմ երա՞ց եմ տեսնում, թէ ճշգրիտ է, էս ի՞նչքան
 եկեղեցիք, ի՞նչքան պարխալ ու բերդ, ի՞նչքան շինութիւնք :
 Ափսոս քեզ Հայոց ազգ, մի ժամանակ էսպիսի քաղաքներ և
 հարստութիւններ էս ունեցել, հիմա ամէն բան կորցրած՝ ան-
 հաւատների ձեռքին գերի ես մնացել : Եղբարք, Աստուած է
 մեզ այս տեղ ուղարկել նա՛ որ մեր բազկին զօրութիւն տը-
 ւեց, այս գիշեր այսքան մեծագործութիւն անելու, նոյն
 Աստուածը յաջողութիւն կը տայ մեր թշնամեաց ոտքն այս
 տեղեց կտրել : Մնանք այս սուրբ հողումը, մեր թագաւորաց
 գերեզմանքը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք զող ու աւա-
 զակներից, մենք բաւական ժողովուրդ ենք, բոլոր մեր աւարը
 ձեզ լինի, մնանք էս տեղ, կամ մենք էլ մեր արիւնը մեր սուրբ
 թագաւորաց հողի վերայ թափենք, կամ կրկին կամայ կամայ
 նրանց քաղաքը պայծառացնենք :

ՀԱՅՆՐԸ .

Չէ, չէ, մեզ սպանիր և էդ առաջարկութիւնը մի՛ անել,
 այս հողն անիծած է, մենք անիծուած տեղը չենք բնակուիլ :

ԱՌՍՔԵԼ .

Դու մեր ազատարար, մեր զլուխը քեզ համար կը զօ-
 հենք, հնազանդ ենք քո ամէն պատուիրանքին, բայց էս ա-
 նիծեալ տեղը չենք մնալ :

ՄԻ ՀԱՅ .

Ո՞վ է լսել թէ մի քաղաք, որ Աստուածանից անիծեալ
 լինի և նորա միջև ժողովուրդը ջնջուած լինին Աստուածա-
 յին բարկութեամբ, այդպիսի քաղաքումը կրկին բնակութիւն
 լինի, էս էլ մէկ հրաշք էր, մեր հոգևոր հայրերից և մեր պա-

պերից լսել ենք, որ եթէ մի Հայ երեք օր Անի քաղաքի մէջ
մնայ, էլ հնանդից կենդանի չի դուրս գալ :

ՄԻ ՈՒՐԻՇ ՀԱՅ.

Դեռ անճանօթ չէ այս տեղի գեանափոր ճանապարհին.
աներևոյթ դեերը այն տեղ բնակուած են և մէջը մանողին
խեղդում են :

ԱՌԱՔԵՆ.

Ես ինքս լսել եմ որ մեր զիւգերից մի մարդ այս աւե-
րակ քաղաքը մանելով, կրնինի գեանափոր ճանապարհը, տասը
տարի մոլորեալ կը սրոնի, ճանապարհ չի գտնիլ դուրս գալու,
ագա մի հնարքով դուրս կը գայ, բայց դա առաջինն է, որ
դուրս է եկել :

ԱՂԱՍԻ.

2
Սխլքներդ զլուխներդ ժողովեցէ՛ք, եզրա՛րք, տասն օր մտորդ
քողցած չի մնալ ի՞նչ էք ասում. հաննեյէ՛ք ձեր զլխից էդ
սխալ կարծիքը. Անին, ճշմարիտ է, քանդուել է, բայց ո՛չ թէ
Յօհան Երզնկացու անէծքով, այլ երկրաշարժու թեամբ. եկէ՛ք
մնա՛ք էստեղ, մեզանից թող սխալ Անի քաղաքի վերահանդ-
նումը : Ես կերթամ Գլումրի, հնանդից հրաման կառնեմ, քը-
րիտոնէի իշխանութեան տակ կը մանենք, կամաց կամաց մեր
կորած մոլորած, անհաւատների բռնութիւնից նեղացած եղ-
բարքն էլ կը գան մեզ հետ կը միանան, լաւ ամուր տեղ ենք,
մեզ ոչ ոք չի կարող յաղթել :

ՄԻ ՀԱՅ.

Մշու սուրբ կարապետը թող քեզ օյնական լինի, ինչ որ
կամիս արձ, բայց մենք չենք մնալ, ահա քո սուրը և մեր
պարանոցը, կամիս կարիւր :

ԲՈՂՈՐ ՀԱՅԵՐԸ.

Մեզ սպանիր և մի՛ պահիր էս տեղ մենք մեր երկիրը
չենք թողուլ :

ՊԵՏՐՈՍ մի Բրտտամայի.

Ի՞նչ էք ասում, եթէ իմանամ, թէ Անի քաղաքի մէջ մը-
նալով պէտք է իսկոյն մեռանիմ, նոյնպէս կը մնամ ես սրա մօտ,

տա, որ իր զըւելը յետ դրեց, մեզ մահելից ազատեց, հիմա մեզ համար վատ բան կը կամենայ. ես առաջինը կը մնամ սորա մօտ և ուր պնայ, հետը կերթամ:

ՊՕՂՈՍ մի ուրիշ երեսասորդ.

Եւ ես քեզ հետ, իմ ընկեր, կը մնամ Ազատու մօտ, եթէ իմանամ էլ, թէ Անին ինձ կլանելու է:

ՄՈՒՍՍ.

Միթէ սուրբ Յօհան երզնկացին, որի համար ասում էք, մի անգամ անիծելէ, ամէն ժամանակ էլ թշնամի կը լինի էս քաղաքին, չէ՞ եղբարք, սրբերը նախանձ չեն պահել սրբերը միշտ բարեխօս են մեզ համար, եթէ մենք նորա անունը յիշելով կրկին շինենք այս քաղաքը, նա ինքը առաջինը օգնական կը լինի մեզ:

ԱՂԱՍԻ.

Ա՛յն տղիտու թիւն, տղիտու թիւն, ի՛նչ ես տուել մեր ազգին չես կարողանում առնուլ, եթէ մեր մէջ լինէին գիտնական մարդիկ, լաւ լաւ քահանայք, արդեօք նրանք այսպէս կը հասկացնէին այս խեղճ ժողովրդեանը: Ո՛վ սուրբ Յօհան երզնկացի, որ ասում են, թէ քո անէծքովդ է քանդուել Անին, մի՞թէ սիրող ուրախացաւ, երբ Աստուած խնդիրդ լսեց, մի՞թէ չխղճացիր քո հարազատ ազգին, քո ծնող Հայաստանին, մի՞թէ չէիր յիշում, թէ քո ազգը կորցնելով իր դահը՝ պէտք է կորցնի և իր ժողովուրդը, այս լա՛ւ է, տասն և հինգ միլիոն ժողովուրդից հիմա չորս միլիոն հազիւ է մնացել, դո՛նէ հիմա խղճած քո հոգի հետ հաւասարուած ազգին, հողւոյ աչքով տե՛ս սրանց տառապանքը և խնդիրը Աստուածանից քո անէծքդ օրհնութիւն վտխել:

ԲՍԲՍԵՂ մի Քրտասանցի.

Ասում են, անօրէնութիւնը այն աստիճան բարձրացած է կիւիլ այս քաղաքումը, որ ամէն մարդոյ ծաղր են արել, Աստուծոյն չեն ձանաչել, եկեղեցի չեն պնացել, սրա համար է սուրբ երզնկացին անիծել:

ԱՂԱՍԻ.

Հէրիք է, մարդիկ, հերիք է, այդ ձեր ասածները բոլորն

առասպելներ են, ո՞վ է կարող ու բանալ Անի քաղաքի աստուած-
 պաշտութիւնը • դուք ինձանից լաւ գիտէք, այս անգի հաղար և
 մէկ եկեղեցիքը կենդանի վկայք են Անույ մէջ եղած ջերմեռան-
 դութեանը • ես լսել եմ, որ մի հովիւ գտակի օրը եկեղեցումը իր
 կնկանը անդ չը լինելու համար մի հոյակապ եկեղեցի է շինել, ո՞ր
 աշխարհումն է լուսած այս բանը : Ա՛խ, էգ քո կիսաւեր ամ-
 բողներիդ մեռնիմ ո՞վ Անի, քո ամէն մի քարը նուիրական և
 սուրբ է, քո ամէն մի աւերակդ ցոյց են տալի Հայոց ճարտա-
 րապետութիւնը և հարստութիւնը, իսկ այդ կիսակործան պա-
 լաններդ, քո թագաւորաց շքեղ փառքն ու դայտնը, ո՞հ, ո՞ւր
 են ո՞ւր, հիմա այդ ամէնը աւանդ, հիմա աւերակ և անատեր են
 մնացել, գազանաց և բուռոյ որջ ու բուռն են դարձել : Հայ քը-
 ղիստոնեայք, ի սէր Աստուծոյ, երեսս տրորեցէ՛ք, մնացէ՛ք այս
 սուրբ քաղաքումը, զոնէ այս աւերակները ձեզ ի դուժ շարժեն :

ՂԱԶԱՐ մի ուրիշ Քրտասանցի .

Ի՞նչ ես հրամայում, եթէ մնանք էլ, եթէ չքանդուի
 էլ, կրկին այսբան Քրդերի մէջ մենք ոչինչ չենք կարող ՚ի
 զլուխ տանիլ, Հայերի սրտին այնքան քաջութեան նշոյլ մնա-
 ցել է, որ պահպանեն այսպէս մի աւերակ դողազարան քաղաք :

ԱՂԱՍԻ .

Լսիր, ո՞վ մարդ, դու գեռ չես փորձել ամէն մի Հայի ոյժը,
 սրտաբեկ, յաղթուած և յուսահատեալ ազգին դժուար է ընդ-
 դիմանալը • ի՞նչն էր ձեզ զօրացնողը, որ ամէնքդ մի մի առիւծ
 էիք դարձել Քրդերին կոտորելու • այդ ձեր վերջին աստի-
 ճան յուսահատութիւնն էր : Հայոց ազգը բաւական նեղու-
 թիւն կրեց, չարչարուեց, տանջուեց, Հայոց ազգը տեսաւ իր
 որդւոցը իրեն աչաց առաջ կտոր կտոր անելը, հալածանք չը
 մնաց, որ չկրեց, չորս անգամ անթութիւն կորցրեց, այժմ էլ
 այնպէս չի անել : Եթէ մէկը կը յանդգնի նրան դիպչել և
 նորա բռնութեան շղթայն արձակ կը լինի, նա ամէնքից կառնի
 իր այնքան նեղութեանց վրէժը : Քրդերը Անիումը մեզ ոչինչ
 չեն կարող առնել, դուք ինքներդ ասացիք, թէ ամէն մէկդ տասը
 Քուրդ ձեր սրին կը գոհէք, ես գիտեմ որ շատ իրաւ է այդ .

Մնացէ՛ք այս տեղ և եթէ ձեզ մի մնաս պատահի, առաջ ետ
իմ գլուխ մահու կը տամ :

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ .

Որքերդ կը համբուրենք, մեզ մի՛ ստիպիր այս տեղ մնա-
լոյ, մենք կերթանք մեր երկիրը :

ԱՂԱՍԻ .

Մուսա՛, ի զուր ենք աշխատում սրանց այս տեղ պահելու,
մենք մի ուրիշ հնար կը մտածենք, բաժանիր ոոցա վերոյ ա-
ւարները հաւասարապէս, մեզ համար մի քանի ձեռք Քրդի
շոր պահիր և փոքր ինչ վառօթ ու զէնք : Ով կը մնայ մեզ
մտ, սիրով կընդունինք, մնացեալին տարէ՛ք ճանապարհ ձգեցէ՛ք :

Մուսէն բաժանում է :

ՄԻ ՔԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՔ

Չէ, մենք չենք գնալ, դու մեր ազատողն ես, մենք քեզ
հետ կը մնանք այս տեղ :

ՊԵՏՐՈՍ .

Ուր որ գնաս, քեզ կը հետեւինք, ինչ հրամայես, կը կատարենք :

ՊՕՂՈՍ .

Մենք զիտենք, որ դու պէտք է Հայոց ազգին օգնես :

ԱՂԱՍԻ .

Մնացէ՛ք այս տեղ, իմ քաջ ընկերք, այսուհետեւ մեր դոր-
ծը պէտք է լինի Հայոց ազգին օգնութիւն հասնելը, իսկ դուք
Հայ Ժողովուրդք, գնաք բարեաւ : Թագուհի, դու ևս գեռ զը-
նա՛ս դոցա հետ, մինչև մենք կերթանք Փամբակ, Նազլուին ևս
կը բերենք այս տեղ և քեզ այն ժամանակ կը բերենք :

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ .

Մնացէ՛ք բարեաւ մեր ազատարարք :

ԹԱԳՈՒՀԻ .

Մնաս բարեաւ իմ Տէր ու փրկիչ :

Ամէնքը բռնում են երեսայեց ձեռքերը և վերցնելով իրենց
աւարները, դուրս են գնում, Աղաւին ճանապարհ է ձգում մին-
չև դուռը, իսկ միւսները դուրս են գնում հեաները :

ՏԵՍԱՐԱՆ Ե՛

ՍՂԱՍԻ միայն սկսում է զննել տեսարանը,
չորս կողմն է նայում եւ յետոյ նստում մի
քարի վերայ այսպէս ստում :

Հայրենիք, հայրենիք, քո հողին մատաղ,
Քո ծխին մատաղ, քո ջրին մատաղ,
Է՞ս փառքն ունէիր, է՞ս պատիւն առաջ,
Որ հիմի աւերուել՝ մնացել ես անշէն :

Ո՛ւր ձեր տէրերը, թագաւորները,
Ձեր պահօնները, ձեր իշխանները,
Ինչի՞ մեզ թողին իրանց որբերին
Ու ձեռք վերցրին թողին էս քարերը :

Հող ունինք խլած, կեանք ունինք մեռած,
Ա՛խ, ջրի, կրակի մենք գերի դառած,
Ոչ երկինքն է տեսնում մեր սուգն ու լացն
Ոչ երկիրն է պատուուում ու մեզ տանում ցած :

Ի՞նչ կըլի մէկէլ զլուս բարձրացնէք,
Ձեր ազգին տեսնէք, նրանց ցաւը քաշէք,
Ձեր արիւնախառն աշխարհն ազատէք,
Կամ մեզ էլ ձեզ հետ հողը տանէք, պահէք :

Ա՛խ, մեր սիրտն էսպէս ընչի՞ հովացել
Արիւնը ցամաքել, մեր կուռը թուլացել,
Արդեօք կը տեսնիմ, ա՛խ, ես մէկ օր էլ
Մեր սուրբ երկիրը թշնամուց ազատիլ :

Կանգնել ես էդպէս զլուսի ափսոսանքին խփած,
Ա՞յ խեղճ ալեօր, երեսըդ փակած,
Ի՞նչ կըլէր, Մասիս, ա՛խ, դեռ աչքդ բաց,
Սրի չստայիր քո որդիքն էրուած :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Վերջին տողի հետ ներս են դալի շտապաւ Մուսան,
 Կարօն, Վաթօն, Վանին եւ մլա սրանց հետ մնացող
 Քրտատանցի երիտասարդքը :

ՄՈՒՍԱ.

Աղասի, մնալու ժամանակ չէ, Անին այսուհետեւ մեզ բը-
 նակորան կը լինի, դեռ շատ կը տեսնենք, հիմա հասնինք. երբ
 մենք նոցա ճանապարհ գրած յետ էինք դառնում, երկու ձիա-
 ւորք շուտով փոխուում էին, մեր հայերէն խօսիլն որ ի-
 մացան, այսքան մեզ ասոցին, թէ Խլղարաքիլիսէն ձեռաց գնաց,
 Հասան խանն եկել և պատել է, խեղճ Հայերի արիւնը գետի
 նման է վազում, շուտ արա՛ւ. Աղասի, մեր Հայերը Պարսից սքին
 զոհ եղան, ա՛խ, Աստուած, Աստուած :

ԱՂԱՍԻ.

Դէ, եղբարք, շտապեցէ՛ք, թափեցէ՛ք այս տեղ ձեր շորերը,
 հագնենք Քրդի շուեր, որ ոչ ոք չի ճանաչի մեզ, գնանք ձի-
 անքը հեծնենք, հասնինք, կամ մեր խեղճ Հայերին աղատենք,
 կամ մեր արիւնը նրանց արեան հետ խառնելով, մեր պապերի
 մօտ գնանք, վեր առէ՛ք շորերը, գնանք ձիանց մօտ փոխենք :

ՎԱԹՕ.

Էլ ինչն ենք սպասում, հիմի Խլղարաքիլիսէն արիւնը
 տարաւ :

ԱՂԱՍԻ.

Գնանք, գնանք, ա՛խ իմ խեղճ ազգ, ախո՛ս քեզ Հայոց աշ-
 խարհ, ո՛վ արիւնակեր Պարսիկներ :

Ամէնքը «գնանք» ասելով, դուրս են գնում :

Վարագոյրը իջնում է :

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

Տեսարանը ներկայացնում է մի լեռան, միւս կողմն երևում է մի աւերակ գիւղ, դրսիցը լսուում են հեկեկանքներ եւ հառաչանքներ, դաշտումը թափած են մի քանի քարեր :

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀԱՍԱՆ ԽԱՆ շտապով սարի վրայից իջնելով :

Ափսոս իմ ձին, ափսոս իմ ձին, մի աշխարհքի հետ չէի փոխիլ : Էս ի՛նչ պատահեցաւ, փոքր էր մնացել անպիտան Հայոց արմատը կտրէի, Խղարաքիլեսէն արդէն ձեռաց դնաց, բայց էլե՛ անյաջողութիւն, ո՞ր տեղից էս անհաւատ Ռուսաց զօրքը դուրս եկաւ. արդեօք իմ զօրքը յաղթուեցա՞ւ, ա՛խ եթէ ձիուս չէին սպանել, ես գիտէի. ապա էն Քրդերը, նրանք ո՞ր տեղից դուրս թափուեցան, նրանք էլ ուրիշ պատիժ ինձ համար, նրանք Օսմանցուի մարդիկ են, Ռուսաց զօրքի հետ ի՛նչ բան ունէին, ի զուր ես նրանց տեսնելով փախայ, դուրս էլ ինձ օգնութիւն էին եկել, իսկ եթէ չփախչէի, ի՛նչ պէտք է անէի, կարո՞ղ էի նրանց յաղթել, եթէ թշնամիք լինէին :

Գոնեա այս տեղ մի լաւ տեղ գտնեմ, զէնքս պատրաստեմ, ո՞վ գիտէ էսպիտի ժամանակները վտանգն անպակաս է :

Նայում է չրջակայքը, բարձրանում սարը եւ թմբի տակին նստում :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՂԱՍԻ սարի վրայիցն իջնելով :

Խան, արեւիկեր գազան, ո՞ւմ ձեռիցը փախար :
Հասան ի՛նչը չհլուած՝ ներքեւ է փախչում :

ԱՂԱՍԻՆ քանակիցը վաղելով և ներքևը
բռնելով նրան :

Ո՞ւր ես փախչում, վեր ձգվիր զէնքդ, թէ չէ էս բոպէին կը-
տոր կտոր կանեմ, դու էս տեղ չբոպէտքէ սատակիս, հայակեր գա-
զան, սուբս ախտս է, որ քեզ պէս թշուառ ճիճուին սպանեմ,
չէ՛, ամօթ է իմ տղամարդութեանը, որ քեզ այս ամայի տեղն
սպանեմ, որ քո մարմինդ գազանաց կերակուր անեմ, որ այս քա-
րերն ու հողը քո արիւնը ծծեն, լսողն էլ էնպէս կարծի, թէ
կռուումը մեռար, դեռ շատ օրեր պէտք է Հայի մեծահոգու-
թիւնը և մարդասիրութիւնը տեսնիս, իմանաս, թէ անաքան-
դութիւնը ի՞նչ է նշանակում, իմանաս, թէ Քրիստոսի օրէնքը
ո՞րքան սուբ է, կամ մեր սուբ հաւատը բնդունիս, որ հոգւոյդ
փրկութիւն լինի, կամ թէ այդ արիւնաթաթախ ձեռքերովդ,
այդ սատանի բաժին հոգւովդ ցանկանաս ձեր դժոխքը գնալ,
քեզ էն Հայերին տամ, որոց որդուցը կոտորել, աները քանդել
և աչքերը կուրացրել ես, որ դըռնդ ջախջախեն, արիւնդ թա-
փեն և մարմինդ շներին և գայլերին տան, վեր ձգվիր զէնքդ,
ապա թէ ոչ այս բոպէիս պլուխդ գնաց :

ՀԱՍԱՆ ԽԱՆ զէնքը վեր ձգելով.

Աղաչում եմ քեզ ո՛վ Հայ, ինձ ազատիր, քո ձեռքն եմ
ընկել այսօր ես քո մատաղն եմ :

ԱՂԱՍԻ նրա զէնքերը ցրուելով.

Սպասիր, Հասան խան, դեռ շատ բան պէտք է գայ գըլ-
սիդ, Հայի սիրտը մեծ է, քեզ այս տեղ չքեպէտք է սպանել,
քեզ վերայ պէտք է մի անարդական արձան կանգնայնել, անու-
նըդ և պատմութիւնդ փորագրել վրէն, որ մեր խելճճ Հայոց
որդիքն իմանան և այսուհետև Պարսից դերի չընկնեն, ձեզ
դերի անեն, ձեր հոգին հանեն : Նայիր, նայիր, էս էն քարերն
են, որ ոտնատակ տուած՝ հաղարաւոր Հայերի դերի արած՝ տա-
նում էիր սրանց վրայով, կամ սպանում. էս էն քարերն են,
որ հիմա ոտքդ բռնել են, քեզ ուզում են կլանել, քեզանից
վրէժ առնել, բայց չէ, ես քեզ էյպէս էժանաղին չեմ ծախել :

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Ո՛վ Մահմատ, ո՛վ Ալի, ո՛վ Իմամ, գետին, պատուելիր, ինձ
մէջդ տնդ :

ԱՂԱՍԻ.

Էս տեղ Մահմատ ու Ալի չղան, երեսդ արեւելք դարձ-
րու, խաչակնքիր, դու մեր Հայերին շատես քո Մահմետի կող-
մը դարձրելը չոքիր Հասան խան, չոքիր ու երեսդ խաչակնքիր,
քեզ քրիստոնեայ պէտք է շինեմ:

ՀԱՍԱՆ ԽԱՆ կատարած.

Այդիտան Հայ, դո՛ւ մնացիր Հասան խանի վերայ ոտք
բարձրացնես, դո՛ւ մնացիր ձեր անարդ հաւատի պատուի-
րանքները գլխիս թափես, հող տուր գլխիդ, Հասան խան, էս
լինչես լուում էն էլ ո՛ւմնից, մի չ'չին Հայից, Քուրդ, Օսմանցի
տանր ինձ էս թուք ու մուրը, թուելի չէր, բայց մի անմա-
քուր Հայ է եդ անողը. ախ, ես ինչն՞ պէտք է Հայի սերունդ
թողայի աշխարհիս վերայ:

Ուզում է գնալ զինք վերցնել, բայց Աղասին բռնում է.

ԱՂԱՍԻ.

Ո՛ւմ հետես խաղում, խան, ես քեզ ցոյց կը տամ զէնք
վերցնելն ինչ է նշանակում: (Ասում է ու ձեռքը Հասան խանի
պարանոցին ձգելով՝ Էնպէս տանում բերում, որ նա խկոյն վեր է
ընկնում.)

ՀԱՍԱՆ ԽԱՆ վեր բնկած.

Ի՞նչ անեմ, հիմա իշխանութիւնը քո ձեռքին է, լեզու
չունիմ խօսելոյ, Հասան Խան, Հասան խան, ո՞ր տեղն ես ընկել:

ԱՂԱՍԻ.

Ահա՛ քեզ զէնք վերցնելը (ուզում է սուրը նանել եւ խփել,
բայց կէսը նանելուց յետոյ տեղն է գնում եւ ասում.) բայց չէ, Հայի
ձեռքի դու չես արժան, ոտքը համբուրիր, քեզ եմ ասում,
Հասան խան, մինչեւ երեսիդ չխաչակնքես, չես ազատուիլ. ի՞նչ
ես մտածում, էս օր ես քո լուսաւորիչը պէտք է դառնամ,
լաւ նայիր, ինձ ճանաչում ես, հազա՞ծս Քրդի շոր է, բայց ինքս
Հայ եմ: Քանի՞ քանի անգամ Սարգարին հրապուրեւես, որ
ինձ թուրքացնէ, ես Աղասին եմ, Աղասին, Հայոց սարվաղների
նայիրը, քանաքեռցի Աղասին, ի՞նչ, ի՞մ հօրը բանախ մէջ կը
սպանես, չէիր իմանում, որ մէկ օր ձեռքս կընգնիս. դու չը-

կարծես, թէ ես քեզ կսպանեմ, մինչև քո ձեռքովդ բոլոր
Հայերին ազատութիւն չտաս, դու չես ազատուիլ :

Հասան խանի գօտին արձակելով կապումէ նրա ձեռները :

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Ես ի՞նչ մեղաւոր եմ, Սարգարն ինքն է բերել քո հօրն ու
ազգականներին գերի արել: ես Հայերի համար միշտ լաւ եմ
կամեցել :

ԱՂԱՍԻ.

Գո՞ւ ես լաւ կամեցել, հնպէս կարծում ես չգիտեմ քո չա-
րագործութիւնքը, յիշում ես Միրզայ-Քաթոնին, որ երկաթը
տաքացրած՝ կողքերը սյրել էիր տալի և պիղծ բերանովդ ստի-
պում էիր նրան հաւատն ուրանալ. տեսա՞ր Հայը, այնպէս կը
համբերէր. տեսա՞ր ինչպէս թքեց ձեր սուտ օրէնքի վերայ և
քո անպիտան խճրճուած միրքին: Հայը միայն ազատ ժամանակը
չէ քաջ, Հայը նեղ տեղն էլ մեծահոգի է : Ո՞ր մէկն ասեմ քո
անթիւ չարագործութեանց ընդդէմ խեղճ Հայոց ազգին :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆՔ և ՄՈՒՍԱ, ԿՍՐԹ, ՎԱԹԹ, ՎԱՆԻ և միւս ընկերքը

ՄՈՒՍԱ.

Աղասի, գլխիդ ճարը տես, քեզ պտռաւելով հողիս կողքերը
րաններս եկաւ, ո՞ր մնացիր, Հասան խանը նոր զօրք է հաւա-
քելը զալիս է, խլարաքիլիսէն կրկին պատեցին, Բօրչալուի Թուր-
քերը Ռուսաց շքորպետին խաբեցին, թէ Պարսիկները Գիւմ-
րին կը պատեն, նրանք էլ իրենց զօրքն առան գնացին, շուտ
արան, գնանք, խլարաքիլիսէն ձեռաց գնաց :

ԱՂԱՍԻ գայտանալով.

Ի՞նչ էք խօսում, աշխարհումս մի Հասան խան կայ միայն
և ահա՛ իմ ոտքիս տակին, երա՞ց է ձեր պատմածը, թէ ցը-
նորմանց մէջ էք, մօտ եկէ՛ք, տեսէ՛ք :

ՊՈՒՐՈՐ մօտ գալով.

Ես ի՞նչ զարմացք, Հասան խանը էս տե՞ր, Աղասու ոտքի
տակին :



ԿԱՐՕ սուրը հանելով.

Թողէ՛ք, թողէ՛ք, իմ սուրը դրա սիրտը կոխեմ: Հերիք է, ինչքան դա մեր արիւնը ծծեց:

ՎԱՆԻ սուրը հանելով.

Տես անօրինին, ի՞նչպէս աչքերը վըէս տնկելէ, ի՞նչ ենք նայում, խփենք, արիւնը թափենք:

ՄՈՒՍԱ.

Աղասի, էլ ի՞նչ ես նայում, դու ես բռնել, դու պէտք է դրա գլուխը կտրես, դու ես միայն արժանի այդ մեծագործութեան և քաջութեան անունը քո վերայ կրելու. ապա թէ ո՛չ, ես վաղուց դրան վերջացրած կը լինէի, որքան անփախչելի է, ջախջախիք դրա գլուխը, դա թունաւոր օձ է, քանի շուտ սպանես, օգուտ է:

ԿԱՐՕ.

Քար ձգիր գլխին, դրա արիւնը մեր վզին:

ԱՂԱՍԻ.

Ո՛վ ինձ սիրում է, սուրը պահէ, էսպէս ամայի տեղը մէկ ուլ սպանելը մեծ բան չէ, թողէ՛ք, դեռ սրան հաւատի բերենք:

ՄՈՒՍԱ.

Ի՞նչ հաւատ, ի՞նչ ես ատում, կատաղած գայլին ի՞նչ աւետարան, մի՞թէ մեր ազգի տունը աւերողին մի բույէ ևս կեանք պէտք է տուած, շունչ պէտք է թողած բերանումը, սպանիք, Աղասի, ապա թէ ո՛չ քեզ էլ դրա հետ կըսպանենք:

ԱՂԱՍԻ.

Ինձ սպանեցէ՛ք, իմ սիրելի ընկերք, միայն թէ թողէ՛ք սրա մահը մի քանի մարդիկ ևս տեսնին, որ սրտները հովանայ: (Հասան խանին) տեսնում ես, Հասան խան, լաւ նայիր այս քաջ երիտասարդներին, քո զօրքը սոցա զօրութիւնը շատ է տեսել, հազար անգամ Մաստարայի կամ Ղօշավանքի կողմերը քո զօրքը հինգ հարիւր հողեով մեզ վերայ յարձակուել են, բայց քառասուն, յիսուն հոգի կորցրած՝ յետ են

դարձել. Նաղի խանը սրանց առաջին դողացել է, սրանց ինչ պէս ես ճանաչում:

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Ա՛խ, մէկ խմանամ, թէ էն քրդերը, որ ձիանոնց ականջը մըտած՝ կրակ կտրած՝ Ռուսաց զօրքի կողմիցը յարձակուեցան և իմ սիրտս ահ ձգելով փակցրին, ո՛վ էին նրանք, կամ ո՛ր էին գնում, իմ զօրքը նրանց տեսնելով՝ աւելի յուսաբեկուեց, քան թէ Ռուսաց զօրքին:

ԱՂԱՍԻ.

Ի՞նչ քուրդ, ի՞նչ բան, չե՞ս նկատում առաջիկ կանգնած կտրիճերին, ահա սրանք էին, որ եկել էին քո պիղծ հոգին սատանի բաժին առնելու. սրանք եկան Խլղարաքիլխումը թափառած բոլոր անմեղ արիանց վրէժն տռնեն, հիմա էլ լսում ես խօսեցածները, եթէ ես թոյլ տամ, փոշիդ երկինքը կը հանեն, հոգիդ դժոխքը կուղարկեն:

ՄՈՒՍԱ.

Ա՛խ, Աղասի, կատաղած գազանին ի՞նչ ես խնայում, միտքդ բեր, թէ քանի՞ հազար Հայի անմեղ արիւն է ծծել դա:

ԿԱՐՑ տեսարանի խորքը նայելով.

Տեսէ՛ք, տեսէ՛ք, ահա դրա զօրքը գալիս են, շուտ սպանեցէ՛ք, մենք փախչինք:

ՄԻՒՍՆԵՐԸ շփոթուած.

Ապանիր, սպանիր Աղասի, ապա թէ ո՛չ, հասան թ շնամիքը:

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Ձեր բաղնեմ ընկել, քաջ Հայեր, յիշեր Աղասի, որ ես պատճառ դարձայ քո նայիպու թեան աստիճան ստանալոյդ, որքան թ շնամի լինիմ, որքան վնաս ևս տուած լինիմ՝ ձեր ազգին, նոյնպէս պաշտպանն ես եմ, խնդրու մեմ ինձ մի՛ սպանիր:

ՄՈՒՍԱ.

Ի՞նչ ես լսում, դորա զօրքը մտեցաւ, դա ալուեսական խարերայ շողքորթ ու թ իւններ է գործ գնում մինչև հասնին

զօրքերը, ապա այն ժամանակը գայլ կը գառնայ, լ. փիր, դրա արիւնը ժանտ է :

ԱՂԱՍԻ.

Լսիր, Հասան խան, ընկերներս քեզ կենդանի չեն թողու՛մ միայն ես կամք չեմ տալի, նրա համար, որ քո բերանովը երդուիս Հայսց ազգին օգնելու և Խլլարաքիլիսէն ազատելու. Թինչ ես վճռում, յանձն ես առնում եթէ ո՛չ, էս վայրկենումս շերտի ու թօքի դուրս կարեցի :

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Աղասի, Մահմետի, Ալու անունովը երդուումեմ, որ այստե՛հ ետե իմ ընթացքս փոխեմ, Հայերին ամէն ազդից շատ սիրեմ, Երևան հասած ըսպէին քո ծնողացը և բոլոր Քանաքեռի կալանավորներին ազատեմ, այս ժամուս մէջ գնամ Խլլարաքիլիսիցը զօրքս յետ դարձնեմ, միայն թէ դու ինձ ազատութիւն տուր : եթէ ասածներս չկատարեմ, եթէ երդմանս հաստատ չմնամ, իմացիր, որ աշխարհումս ինձ նման անարգ մարդ չը կայ, թող իմ անունը Հասան խան չը լինի, թող Մահմետի գողը չերթամ, ահա իմ հաւատս էլ քեզ վերադիր :

ԱՂԱՍԻ.

Եթէ այդպէս է, ես քեզ շուտով կազատեմ, եթէ երդումդ ևս հաստատ չպահես, հոգ չէ, էտով քո անպիտանութիւնը ցոյց կը տաս աշխարհին, թէ և առանց էդ էլ զիտեն բոլորը. միայն մի փոքր էլ սպասիր, մինչև քո Թուրքերը գան և տեսնեն իրենց տիրոջը իմ ոտքի տակին :


ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Խնդրումեմ, դեռ իմ մարդիկը չեկած՝ ազատիր, ամօթ է ինձ համար, եթէ նրանք ինձ այսպէս տեսնին, Հասան խանը առաջին անգամն է այս տեղն է ընկնում, մինչև այսօր նրանք բացի իմ քաջագործութիւնից՝ ուրիշ ոչինչ չեն տեսել :

ԱՂԱՍԻ.

Չէ, չէ, դեռ համբերիր, քո բերանովը պէտք է նրանց պատու իրես, որ գնան Խլլարաքիլիսից զօրքը յետ դարձնեն : Դրոնց լսուում է սոնաձայն և աղաղակ :

ՏԵՍԱՐԱՆ Դ.



Մի քանի թուրք ներս են գալի եւ տեսարանի խոր-
քումը կանգնում, զարմացմամբ նայում :

ԱՂԱՍԻ Բրդերին.

Գլը խներդ ոտքիս տակին է, թուրքէ՛ր, հինգ ժամ է, ձեր
հոգին իմ ձեռքին է, ահա Հասան խանը, որ լեռներ ու դաշ-
տներ էր դողացնում. սրան նայեցէ՛ք, ձեր սե օրը լացէ՛ք :
(Հասան խանին) խան, հրամայիր, որ գնան Խլղարաքիլիսէն ա-
զատեն, էն ժամանակ քո կեանքն էլ կը լինի ազատ, ապա թէ
ո՛չ, բազկիս զօրութիւնը տեսար :

ՀԱՍԱՆ ԽԱՆ.

Տղայք, գնացէ՛ք զօրքը յետ դարձրէ՛ք, ես էլ հիմա գալիս եմ :
Թուրքերը դուրս են գնում :

ԱՂԱՍԻ Հասան խանի ձեռքերի կապն ար-
ձակելով :

Հիմա դու էլ կարող ես գնալ. բայց չկարծես, թէ կերթաս
և կը կտորես, ես իմ քաջ ընկերներովը առաջդ կառնեմ, ի-
մայիր, Հասան խան, Երեւանայ բերդումն ես լինիս. քեզ կեն-
դանի չեմ թողուլ, եթէ երդմնազանց դանուկով մի Հայի ան-
գամ զիպչիս. վեր կաց և գնա :

Հասան խանը լուռ ու մունջ վեր է կենում, վախե-
նալով դուրս գնում :

ԱՂԱՍԻ Ընկերներին.

Հիմա գնանք, սիրելիք, Աստուած մեր կողմն է, Հայոց փրո-
կութեան օրերը մօտայել են, գնանք, խառնուրինք Ռուսաց զօ-
րաց հետ, շուտով ես զիտեմ կերթանք Երեւան առնելու, շու-
տով արժանի կը լինինք մեր ընտանեաց տեսութեանը : Ա՛խ,
հայրենիք, անխ ծնողք, անխ նաղլու, արդեօք միւս անգամ ձեր
երեսը կը տեսնեմ :
դուրս են գնում :

վարագոյրը իջնում է :

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Տեսարանը ներկայացնում է Երևանայ բերդի բակը, մի քանի տեղ պատերազմական գործիքներ են թափուած, դռների առաջին կանգնած են Ռուսաց պահապաններ, մի քանի թուրքեր այս կողմից գալիս, այն կողմն են փախչում:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱՂԱՍԻ հեծեկազորաց զորապետի հաղուատով.

ԷՍ ինչ խորին լռութիւն է, կարծես թէ ահագին բերդի մէջ ոչ ոք չըլինի, կարծես թէ նոր չլինի Երևանն առած, ամէն բան խողաղութեան մէջ է, ո՛հ, մի քանի ժամանակ յառաջ կարծող էր Հայը համարձակ այս բերդումը ման գալ իսկայն զլուխը կերթար: Այս թողնենք, ես քա՛նի քանի անգամ լսել եմ, որ իմ հայրս այս տեղ բանտարկեալ է, արդեօք ո՛ւր է. արդեօք դեռ կենդանի՞ ես, հայր, թէ քո կոյած որդւոյն թողել ես աշխարհիս երեսին տարաբաղը ընիլ մինչև իր մահը: Վայ քեզ, Աղասի, հինգ տարի էր Երևան չէիր տեսել, հինգ տարի էր անհամբերութեամբ ուզում էիր գալ այս բերդը և ազատել քո հօրը. զորս համար մինչև այն կէտն աշխատեցար, որ սրտիդ փափաքը կատարուեցաւ, բայց հիմա Երևանը ոտքիդ տակին է, հիմա համարձակ տրորում ես այն տեղերը, ուր քո արևանն էին ծարաւում և չես գրտնում քո սրտի ցանկալին, քո զառամեալ հօրը: Հայր . . . հայր . . . բայց ահա այն ամրոցի մօտ մի մարդ է կանգնած, գնամ իմանամ ո՞վ է, մի քանի հարցեր անեմ նրան, գուցէ նա

գիտենայ իմ խեղճ հօր որպիսու թիւնը : (Գնում է մարդոյ մօտ.)
Ո՞վ ես դու եղբայր, կամ այս տեղ ի՞նչ գործք ունիս :

ԲԱՆՏԱՊԵՏ .

Ես մի խեղճ Հայ եմ, երկու տարի է Սարգարի հրամա-
նուը բանտապետ եմ էս բերդումը, Ռուսը առնելուց յետոյ,
չառ խնդրեցի որ ինց ազատեն, բայց Ներսէս սրբազանը, որ
ճանաչում էր ինձ, պատուիրեց սպասել մինչև երեկոյ, երբ
բոլոր բանաարկելոցը արձակելուց յետոյ և ինձ կազատեն : Ես
հիմա բանտի դռանը սպասում եմ անհամբեր երեկոյեան ցան-
կալի ժամին :

Ա.ՂԱՍԻ կողմը .

Գտայ, ում կըցանկայի տեսանել : (Մարդին) Եթէ դու երկու
տարի է բանտապետ ես, անպատճառ կը ճանաչես մի ծերուն-
ւոյ, որ միշտ ողբում է և Վաղասի է կանչում, կամ թէ մի
այլ մարդի, որ միշտ Մուսա է ձայն տալի. ասա խնդրեմ, այս-
պիսի մարդիկ կա՞ն քո բանտի մէջ :

ԲԱՆՏԱՊԵՏ զարմացմամբ եւ կողմը .

Սա ո՞վ է, որ ճանուտէր Օհանէսին ճանաչում է, կարիլի է
նորա որդուցը լուր ունենայ : (Աղասուն) Այո՛, տէր, քո ասած
երկու անձինքն էլ այս տեղ են և հիմա բանտումն են, դո-
ցանից մէկն է Քանաքեռցի Տանուտէր Օհանէսը, իսկ միւսը՝
Յարութիւնը, դու որ տեղե՞ց ես ճանաչում դրանց :

Ա.ՂԱՍԻ .

Աստուածատէր մարդ, բարերարութիւն արա՛ ինձ, բաց
բանտիդ դուռը և ցոյց տուր ինձ այդ մարդկանոցը, ես նոցա հետ
փոքր ինչ խօսք ունիմ, շուտով դուրս կը գամ և դու կտառ-
նաս քո բարեգործութեան վարձը :

ԲԱՆՏԱՊԵՏ .

Ինձ համար մեծ ուրախութիւն էր կատարել քո խնդիրը,
մանաւանդ որ մեր կեանքը ձեզ ենք պարտական երեւնայ ա-
զատութեամբը, բայց ներիք ինձ, ես հիմա չեմ կարող բանալ
բանտի դուռը, Տանուտէր Օհանէսն էլ ինձ սիրիլի է, ես միշտ

նրան պատուում էի, բայց մինչև երեկոյ չեմ կարող սրբազան
Ներսէս եպիսկոպոսի հրամանին ընդդիմանալ :

ԱՂԱՍԻ.

Յառուկ աղերսում եմ, ես սաստիկ գործք ունիմ նրա հետ,
նա քեզանից մեծ շնորհակալութիւն կառնէ, եթէ դու ինձ
ներս թողուս, խնդիրս մի՛ մերժեր, բայց դուռը, ես մեծ ի-
րաւունք ունիմ զօրաց մէջ, վաղը ես քեզ կրարեբաղդայնեմ :

ԲԱՆՏԱՊԵՏ.

Ի դուր է քո խնդիրդ, եթէ դու ինքդ լինիս առաջին զօ-
րակեան անգամ, երևանայ բերդն առնողը, իմ կենաց տէրը,
նոյնպէս չեմ կարող առանց սրբազան Ներսէս եպիսկոպոսի
հրամանին բանալ դուռը, նա ինձ պատուիրել է այսօր ամէն
օրից շատ զգոյշ լինիլ որ մի՛ դուցէ թշնամիք գան և բա-
րեկամական պատրուակաւ ներս մաննեն, վնաս պատճառեն խեղճ
բանտարկելոյք. այսօր քանի՞ Թուրք եկել խնդրել են բ նաը
մաննել, բայց ես չեմ թողնել քեզ էլ նոյնպէս չեմ թողուլ :

ԱՂԱՍԻ գալով դէպի ժողովուրդը.

Ամէն կողմից յոյսս ի գերեւելաւ, ես մինչև երեկոյ չպէտք
է հօրս տեսնեմ, ախ, սիրտս որքան անհանդիստ է, հինգ տարի
այսքան դժուար չեն անցել օրերը, որքան այս մի քանի ժամը,
ի՛նչ մեծ տիրութիւն րոպէ առ րոպէ ծանր բեռի պէս բարձ-
րանում է իմ վերայ, սիրտս մի չարագուշակ բան է զդուսմ,
կարծես թէ հօրս յափշտակում են իմ ձեռքիցը, կարծես թէ ար-
ժանի չըպէտք է լինիմ տեսնելու նրան, կարծես թէ մէկը թեւ-
ւիցս քաշելով դուրս ձգում լինի ինձ այս բերդիցք. այս ի՛նչ
դժուար րոպէ է, կարծես թէ միւս անգամ ուրախութեամբ
չըպէտք է դառնամ Նազըլիս մօտ, թանձր խաւարն աչքերս
պատել է : (Նստում է և վտրբ ինչ լռում.) չիմա ես ո՞ւր կոր-
չիմ, մնամ նստած այս հասարակատ բերդումը, բայց գնացող ե-
կողներն ի՛նչ կասեն, լաւն այն է գնամ մի երկու ժամ էլ սպասեմ,
(Վեր է կենում և ուզում է դուրս գնալ, բայց կանգնում է.) Ոտքս չէ
գնում, ի՛նչպէս տարաբաղդ հօրս բանտումը թողում և հե-
ռանամ, միւսանգամ գնամ բանտապետին խնդրեմ, արդեօք

յայտնեմ նրան իմ ո՛վ լինիլը, բայց մի՛ գուցէ նա ամէնին յայտնի. էն ժամանակը . . . գնամ, գնամ: (Գնում է բանտապետի մօտ)
Հայ քրիստոնեայ, խղճա՛ էն ծերին, թո՛ղ երեսը տեսնեմ, մի գաղտնիք կայ, որ շեմ կարող քեզ յայնել, քեզ համար վարձք և օգուտ է:

ԲԱՆՏԱՊԵՏ.

Վերջին անգամ ասում եմ քեզ, որ անկարելի է քո խընդիրը կատարելը. եթէ կամիս, գնա՛ սրբազան Ներսէսից հրաման բեր, բանամ:

ԱՂԱՍԻ գալով դէպի ժողովարդը.

Ներսէս եպիսկոպոսին գնալ, նա ինձ ասաց սպասել մինչև խաղաղութիւնը տիրելը. ես խօսք տուի, հիմա ի՛նչպէս գընամ: Ո՛վ գառն ճակատագիր, ո՛վ անփարատ տրտմութիւն, որ ինձ սպասել է, հողիս դուրս է գալիս, գնամ Ներսիսի ոտքերն ընկնեմ. առնեմ իմ ցանկալի հօր ազատութեան հրամանը . . . ո՛վ հայրական քաղցր օրհնութիւն:

Աղասին դուրս է գնում, նրանից յետոյ էլ Բանտապետը բանտի դռներին նայելով՝ դուրս է գնում.

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՀՄԱՏ. ՎԱԼԻ և ՆԱՂԻ.

ԱՀՄԱՏ պատերի տակերը նայելով.

Ես տեսայ, որ նա էս բերդը մտաւ, ես նրա երեսիցը լաւ ճանաչեցի, որ ինքն էր, կերպարանքը բոլորովին չէր, փոխուել. ես ուզում էի ճանապարհին սպանել նրան, բայց Ռուսաց զինւորներ կային, վախեցայ և եկայ ձեզ կանչելու, հիմա չգիտեմ, ո՞ւր է գնացել:

ՎԱԼԻ.

Դու իսկապէս իմացա՞ր, որ նա Աղասին էր, այն անօրէն Բանաքեռցին, այն աւազակապետը, որ իմ եղբօրը Արարանու Քնսպանեց, քո հօրը և սրա որդւոյն Խլղարաքիլիսի մօտ:

ՆԱԳԻ.

Եթէ նա էր, պէտք է պտտտել ամէն տեղ, թէ էս օր չը յաջողեցաւ, վաղը պէտք է անպատճառ սպանել, մեր աչքերը թող դուրս գայ, եթէ նա Ռուսի զօրապետութեան աստիճանում մեր առջևը համարձակ շրջի էս քաղաքումս :

ՎԱԼԻ.

Բայց եթէ յանկարծ նա չլինի և ուրիշ մարդի սպաննը նորա փոխանակ, էն ժամանակ թէ մեր վրէժն առած չենք լինիլ և թէ այն մարդի արիւնն էլ կըմնայ մեր սերնդոց վերայ :

ԱՀՄԱՏ.

Ի՞նչ արիւն, նրանք անհաւատ մարդիկ են, մեր Մահմետի կրօնին թ շնամի, հիմա էլ եկել մեր իշխանութիւնը յափրշտակիցին, ո՛չ միայն մէկ մարդի, մենք պէտքէ աշխատինք, մեր սերնդին էլ աւանդենք, որ ամէն քրիստոնէից վրէժ առնունք: Ես շատ լաւ իմացայ, որ նա Աղասին էր, էրեկ երկու երեք շայ իրօր հետ գնալով միմեանց պատմութիւն, թէ Աղասին էլ Ռուսաց բանակումը պէտք է լինի, այսօր էլ ես աչքս տեսայ:

ՎԱԼԻ.

Եթէ այդպէս է, գնանք, ուր որ լինի գտնենք, մեր արիւնը առնենք նրանից, չթողունք որ հօր երեսն անգամ տեսնի և վերջին բարեւը տայ, էդ աւելի ցաւ կը լինի, թէ Աղասու ազգակցացը և թէ բոլոր Հայերին :

ՆԱԳԻ.

Այս իսկ բուզէն լինի մեր ժամագրութիւնը, ո՛չ ուտենք, ո՛չ խմենք, մինչև սպաննը Աղասուն, կամ թէ Աղասին ևս չը լինի, զոնէ նրա նման մէկին, եթէ նման ևս չը լինի, գտնէ Հայ քրիստոնէայ է, մեր Մահմետին թ շնամի է :

ԱՀՄԱՏ.

Այն մարդը ո՞վ և լինի, պէտք է ես նրան սպանեմ, իմ սիրտս վկայում է, որ նա Աղասին է, այն մեր արեւապարտ Աղասին :

ՎԱԼԻ.

Իմ սիրտս էլ զգում է, անհրար է որ ես նրան չը սպանեմ

եթէ Աղասին էլ չլինի, նրա անունով պէտք է հէ մարդին սպանեմ, սուրբ պէտք է սրտումը խփեմ:

ՆԱՂԻ.

Իմ սուրն ևս սրտումը պէտք է խփեմ, մինչև վաղը ես իմ փափաքին հասած կը լինիմ:

ԱՀՄԱՏ.

Ուրեմն զնանք, սպանենք նրան, ուր և լինի, մեր վրէժն ասանենք, իմ սուրն ևս մէջքումը, երեք սուր ի միասին:

ԵՐԵՔՆ Ի ՄԻԱՍԻՆ.

Ի միասին, ի միասին, երեք սուր ի միասին:

Դուրս են գնում.

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԲԱՆՏԱՊԵՏԸ ներս գալով և բանտի դռները բանալով.

Հիմա ո՞ւր է այն զորապետը, թող գայ տեսնէ ճանուտէր Օհանէսին, ես հրաման առայ սրբազան Ներսէսիցը: (Առանձին առանձին դուրս թերելով բանտարկելոցը և պատի մօտ նստեցնելով:) Նկէ՛ք, ո՞վ խեղճեր, ահա ձեզ ազատու թիւն. Երևան թուրքի ձեռքիցն ազատու եցաւ, դուք հիմա ազատ էք, շուտով կը գայ սրբազան Ներսէսը և ձեզ բոլորովին դուրս կը տանի:

Բանտարկալըը գալիս պատի տակերին նստում են.

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍՄԲԱՏՈՎ և ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ ներս գալով և չրտեսնելով բանտարկելոց:

ՍՄԲԱՏՈՎ.

Փառք Աստուծոյ ի վերջոյ կարողացանք նպատակներիս հասնել, մեր տառապեալ ազգը ի վերջոյ ազատուեց Պարսից բռնակալութենիցն, ո՞հ, եթէ իմանաս, Մէլիք, թէ ո՞րքան այր-

ուում էր մեր սրբազան Ներսէս եպիսկոպոսի սիրտը՝ տեսնելով մեր խեղճ Հայաստանը և մեր մայր Աթոռը անհաւատաների լծի տակ ճնշուած :

ՄԵԼԻՔ ՍԱՀԱԿ.

Բայց եթէ իմանայիր, իշխան, թէ ի՞նչպէս այրուում էի ես, երբ իմ աչաց առջև Հասան-Խանը տաք երկաթներով դաղում էր մեր խեղճ ազգին և ինձ վշտացնելու համար զանազան դառն հայհոյանքներ էր թափում մեր սուրբ հաւատոյ վերայ : Աստուած բարի տայ Ս վան-դուլի Խանին իր գործաքովը, որ խիղճ ունենլով իր մէջ, միշտ լսում էր իմ խնդիրքը և ամէն այդպիսի տեղիւրը օգնում ինձ : Ահա նայիր, պատի տակին ընկած կիսաշունչ ծերունւոյն և նրան շրջապատողներին. այն վշտալի ծերունին է Քանաքեռցի Աբովինց Օհանէսը, իսկ միւսները Քանաքեռի պատուելիքն են. խեղճերը այս հինգ տարի է բանտակուած են Տանուտէր Օհանէսի որդի քաջ Աղասու պատճառաւ, որ մի աղջկայ համար Սարգարի Փարբաշներին անարգելով և Սարգարի հրամանը ոտնատակ աալով՝ փախել էր Ղարսայ հողը : Էդ էլ բաւական չէ, Սարգարը յիսուն զինուոր ուղարկեց նրան բռնելու, իսկ նա իր չորս ընկերներովը մինչև քսան հողւոյ սպանել էր Աբարան, քնացեալքը յետ էին փախել :

ՍՄԲԱՏՈՎ.

Ի՞նչ այն ծերունին Տանուտէր Օհանէսն է, Աղասու հայրը, այն քաջ երիտասարդի : Ա՛խ, ի՞նչ կրլինէր Հայաստան նրա նման հազարը ունենար, այն ժամանակ կարող էինք տեսլ, թէ Հայաստան իր նախնի փառքին հասած կը լինէր : Ես այն քաջ երիտասարդին տեսայ թիֆլիզ. նա եկել էր Շամքոռ Մատաթովի մօտ և յայտնել Պարսից զօրաց մօտենալը. Մատաթովն ևս իր կողմանէ ուղարկել էր թիֆլիզ. այն տեղ ստացաւ նա զօրապետութեան աստիճանը. լսելով, որ երևանայ վերայ պէտք է գնան, նա խնդրեց սրբազան Ներսէսից, որ իրեն ևս մեր զօրաց հետ վեր առնեն և այժմ ևս ահա բանակումն է : Ինձ Ներսէս եպիսկոպոսը ասաց, որ նա մեծ վեհադործութիւն արեց բերդն առնելուս. ծանօթ լինելով բոլոր տեղերին, ցոյց

տուեց, թէ ո՞ր տեղից աւելի յարմար է թնդանօթ արձակելը. կամ որ տեղից յառաջ գալը. շուտով, կարծեմ, նորա աստիճանն ևս կաւելանայ :

ՄԵԼԻՔ ՍԱՀԱԿ.

Մթթէ հիմա Աղասին էս տեղ զօրաց հետ է, եթէ նա իմանայ, թէ իր տառապեալ հայրը հինգ տարի այս բերդումը տանջուելով վերջին շունչն է հասել, գիտեմ նորա ազնիւ սիրտը, թէ ի՞նչպէս ներս կրնինի և իր հօրը դուրս կը տանէ. բայց չգիտեմ նորա ընկերքն ի՞նչ եղան :

ՍՄԲԱՏՈՎ.

Նա պատմում էր, թէ ընկերքը Պարսից բանակի մօտ փամբակումը ցրուեցան իրանից և դրրա համար շատ հոգս էր քաշում :

ՄԵԼԻՔ ՍԱՀԱԿ

Գնանք, իշխան, գնանք ուղարկենք Աղասուն էս տեղ, թող գայ խէ իր հօրը մահուան ձեռքից. ա՛ն թէ իմանայիր, ի՞նչ մութ և խոնաւ էր Տանուտէր Օհանէսի արգելարանը, չգիտեմ ի՞նչպէս ապրեցաւ այդ խեղճ ծերունին մինչև հիմա :

ՍՄԲԱՏՈՎ.

Կանչենք բանտապետին, պատուիրենք յառաջ բերել այդ խեղճերին այն ծմակիցն այս արեգունի տեղը, թո՛ղ փոքր ինչ հանգիստ առնուն, մինչև բոլորովին դուրս գան բերդիցը :

ՄԵԼԻՔ ՍԱՀԱԿ գնալով դէպի տեսարանի խորքը.

Բարի Բանտապետ, յառաջ տար այս ողորմելիներին, թո՛ղ փոքր ինչ արև տեսնին : (Բանտարկելոցը.) Եկէ՛ք, ո՞վ խլճալիք, բաւական նեղու թ իւն կրեցիք, ահա արևը, հանգստացէ՛ք այն տեղ փոքր ինչ, մի՛ վախիք, էլ Պարսից բռնութիւն չկայ, էլ չասան խան չկայ, որ ձեզ պատժէ, նա հիմա բռնուած է և բանտարկուած բերդումը, Սարգսարը վաղուց փախել է, Պարսից խաներն ու բէգերը գլուխ առել, կորել են. մենք հիմա կերթանք ձեզ համար հոգս կը քաշենք, շուտով կազատուիք էս տեղից :

Դուրս են գնում.

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Բանտապետը բերում է բոլոր բանտարկելացը եւ նստացնում յառաջ.

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՂԱՆԷՍ.

Ա՛խ, իմ ուրախութիւնս էն կը լինի, որ տեսնեմ միւս անգամ իմ որդւոյս, (ձեռքը ձախտոյն դրած.) ապա ո՛ւր է . . .
Թող դայ, դայ տեսնեմ. Աղասի, որդի, հողի, քանի մի քանի ինձ մաշես, երկնքումը վաղուց եմ տեղս պատրաստել, արի մէկ շունչդ առնեմ, աչք չէ մնացել, որ քեզ տեսնեմ, ձեռք չունիմ, որ քեզ դրկեմ, միայն մնացել է լեզուս եւ ականջս, թող ձայնդ լսեմ եւ այնպէս խեղճ՝ մօրդ լուր տանեմ. ա՛խ, մայրդ երջանիկ էր, նա Աղասի կանչելով՝ շուտով թողուց էս դառն աշխարհը, ես՝ ես միայն մեղաւոր էի, որ մինչև հիմա մնացի. արի, արի, որդի, արի հող ձգի՛ր քո հօր երեսին :

ՅԱՐՈՒԹԻՒՆ.

Լաց լինինք, լաց լինինք, Տանուտէր Օհանէս, աշխարհումս մեզանից աւելի թշուառ մարդ չկայ, ի՞նչ էինք արել, ո՞ւմ էինք մնաս տուել, որ մեր առաջն եկաւ, ո՞հ հինգ տարի է զրկուած ենք որդուց, հինգ տարի է դառն նեղութեան եւ խաւարի մէջ ենք, ինչի՞ էս հինգ տարումը Աստուած մեր հօսքին չառաւ. բայց կարելի է Աստուած մեզ ոլորմում է, կարելի է պէտք է տեսնենք մեր կորած որդւոյը. ա՛խ, դու լաց, Տանուտէր Օհանէս քո Աղասուն, իսկ ես իմ միակ Մուսային, ո՞հ, Մուսա՛, Մուսա՛ . . .

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՂԱՆԷՍ.

Աղասի, Մուսա՛, Կարօ՛, Վաթօ՛, Վանի՛, հիտը ընկեր, կըքօր պէս մեծացաք, իրար հետ սէր վայելեցիք, իրար հետ էլ ձեր խեղճ՝ ծնողացը կրակի մէջ ձգեցիք. Աղասի . . . որդի . . . հողի . . . :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Մուսա կուրացած եւ մի մարդ կուռը բռնած.

Մ ՈՒՍԱ. ներս գալով.

Ա՛խ, ս՛ւր է, ս՛ւր է իմ տարաբաղդ հայրը, ցոյց տուր ինձ, ի սէր Աստուծոյ. հինգ տարի այդ քաղցր անուէր այրել, կըրակել է ինձ :

Մ ԱՐԴԸ տեսարանի խորքնը նայելով.

Մի ժամ յառաջ նրանք բոլորը էս տեղ էին, հիմա չգիտեմ ի՞նչ եղան, բայց ահա հեռուումը ժողոված են, գնանք այն տեղ :

Մ ՈՒՍԱ.

Տա՛ր, տա՛ր ինձ, ո՞վ Աստուածասէր Հայ, թո՛ղ ես գոնէ առնեմ հօրս վերջին օրհնութիւնը, յետոյ հողիս տամ :

Մ ԱՐԴԸ տեսնելով բանտարկելոց միջ Յարութիւնին.

Ո՛վ անբաղդ հայր, ահա քո կորած որդին, ահա քո Մուսան :

Մ ՈՒՍԱ.

Հայր, անբաղդ հայր, ս՛ւր ես, մօտ արի՛ զիրկդ ընկնիմ, մօտ արի՛ հայրական արտասուքդ թափի՛ր որդւոյդ խաւարեալ աչքերի վերայ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ գրկելով.

Մուսա՛, իմ աղնիւ որդեակ, դ՛ու ես որդի՛, թէ երազ եմ տեսնում. այսքան նեղութիւնից յետոյ ուրեմն արժանացո՞յ որդւոյս տեսութեանը : (նայելով աչքերին.) Վայ՛ ինձ, էս ի՞նչ եմ տեսնում, որդւոյս աչքերը հանած : (թուլանալով.) Խաւարի՛ր աչքեր, նրա համար նեղութիւն եւ վեշտ կրեցի, որ վերջը տեսնեմ որդւոյս աչքերից գրկուած, ո՞վ դառն օրհաս. մեռի՛ր, Յարութիւն, մեռի՛ր, այսուհետեւ քեզ ապրիլը հաբկաւոր չէ :

Մ ՈՒՍԱ.

Հայր, տուր ձեռքդ համբուրեմ, օրհնի՛ր, հայր, օրհնի՛ր տարաբաղդ որդւոյդ, բաւական է որքան ապրեցայ, քո վերջին

օրհնութիւնն եմ խնդրում միայն և այլ կը լինի իմ մխիթարանքը: Մուսան չի ուզում այսուհետև աշխարհիս երեսին մնալ:

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՂԱՆԷՍ:

Մուսա՛, իմ Աղասուս թեև ու թ իկո՛ւնք, դու միայն ես, դու թողել ես Աղասուս, թ է կոյր բազդը քանդելով իմ տունս խլեց նրան քեզանից: Մուսան և ո՛չ Աղասին, Աղասին և ո՛չ Մուսան, ի միասին մեծացած՝ ի միասին սէր վայելած՝ ի միասին տարագիր եղած, հիմա վա՛յ մեզ, մինը բոլորովին կորած, միւսը աչքերից զրկուած. էլ ինչի՞ ենք ապրում, Յարութիւն, ինչի՞. հող տանք գլխներիս, ձիւն տանք արևներիս, այսօր պէտք է մեզ ազատեն այս տեղից, մեզ ի՞նչ հարկաւոր է ազատութիւն. Աղասուց և Մուսայից զրկուած՝ հինգ տարի խոնաւ և մու՛թ բանտումը ծանր շղթաներ կրելից յետոյ՝ մենք նո՞ր պէտք է մխիթարուինք:

ՅԱՐՈՒԹԻՒՆ:

Մուսա՛, որդի, Զանգուն ներքեւը իր բերանը բաց է արել մի քանի օր կայ, որ Հայոց գլուխ չի մատաղ արել իր անկուշտ որկորին, դու կանց, որդի, մենք պէտք է գնանք, զո՛հ լինենք նրան:

ՄՈՒՍԱ:

Հայր, Տանուտէր Օհանէս, երկուսդ էլ մէկ կապանքի մէջ ձեր օրդուց փոխանակ անիրաւ Պարսկաց պատժին էք ենթարկուել Աղասի, Աղասի, զլիսովդ պտուտ զնամ. քանի քանի անգամ քո քաջ ընկերներովդ կամենում էիր յանկարծ դալ յարձակուիլ երևանու բերդի վերայ. արևներ Հասան-Բանին, հայաստեաց Սարգսրին քո քաջ բազկին, քո անսխալի լի սրին զո՛հ անել. ես՝ ես քո սևերես Մուսան չթողի: Բայց ինչի՞, ինչի՞ Հասան-Գանին խնայեցիր, որ քո Մուսայի աչքերը հանեց և քեզ քո սիրելի ընկերներեղը կարօտ թողուց, ո՞վ գիտէ, ո՞ւր ընկար դու, իսկ մենք ողորմելիքս այս օրին հասանք: Ա՛խ, ո՞ւր ես, Աղասի, սուրբ Սարգսի նման ամէն նեղելոց օգնութիւն էիր հասնում, Կանէ այս նեղ դրութեան մէջ քո խեղճ հօր վերջին շնչին և օրհնութեանը հասնէիր:

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՆՈՑՆՔ, ԱՂԱՍԻ Լ ՄԻ ՄԱՐԴ.

ՄԱՐԴԸ ցոյց տալով մատով.

Ահա ճանուաէր Ոհանէսը, որին ցանկանում էիր տեսնել, այն ամենից ծերն է, խեղճը իր որդու համար այդքան տանջանքները կրելով այդ տեղն է հասել:

ԱՂԱՍԻ վազելով եւ հօր գիրկն ընկնելով.

Հայր, իմ քաղցր հայր, դեռ կենդանի ես, դեռ քո կորած որդւոյն, քո սեւերես Աղասուն յիշում ես, հայր, հայր:

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԷՍ.

Ո՛վ Աստուած, էս ի՞նչ ձայն, Աղասի . . . որդի . . .

ՄՈՒՍԱ ձեռքերն ածելով,

Աղասի, քո ձէնն եմ լսում, փառք քեզ Արարիչ, թող հիմա հոգիս տամ:

ԱՂԱՍԻ մէկ ձեռքով հօրը գրկած, միւսովը Մուսային գրկելով.

Տէր Աստուած, էս ի՞նչ օր է ինձ համար, Մուսան, Մուսա բերդո՞ւմը. (նայելով երեսին) ո՛հ, խաւարի՛ր իմ աչքեր. Մուսա, Մուսա, դու է՛լ Աղասու համար աչքերդ մատաղ տուիր:

ՏԱՆ. ՕՀԱՆԷՍ որդւոյ գրկումը թալկացած.

Բեր երեսդ համբուրեմ, որդի, հայրական օրհնութիւնս քեզ պահպանեց. մայրդ քօչի ճանապարհին էր հոգին սրւելը, ահա և ես իմ վերջին օրհնութիւնն եմ տալի . . . օրհնութիւն, որդեակ, ցաւած հօր օրհնութիւն:

ԱՂԱՍԻ.

Վայ իմ սե օրիս . . .

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՆՈՑՆՔ. ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ Լ ՄՐԱՍՏՈՎ.

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ

Բաւական է, որքան տանջուեցան խեղճօրր, գնանք դուրս

բերենք բանտիցը Աղասուն չլտանք, որ ինքը գար իր հօրն ազատէր :

ՍՄԲԱՏՈՎ յառաջ գալով եւ տեսնելով.

Ահա հեռուումը երևում է մի տեսարան, կարծեմ Աղասին պէտք է եկած լինի եւ հօր մօտ է :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ.

Ճշմարիտ է, գնանք տեսնենք ի՞նչ է այն :

ԱՂԱՍԻ տեսնելով նրանց.

Եկէ՛ք, Մէլիք եւ իշխան, եկէ՛ք, զլուսս լացէ՛ք, հինգ տարի նեղութիւն կրելուց յետոյ այս զրութեան մէջ պէտք է գտնեմ իմ ծնողին եւ իմ սիրեկան Մուսային : Հայրս կարողութիւնից զրկուած՝ ձեռք չեմնացել վրան, լեզու չը կայ բերանումը, աչքեր չունի տեսնելու, իսկ իմ քաջ Մուսան, իմ բնտիր կղբայրը ամբողջ հինգ տարի ինձ հետ չարչարուելուց յետոյ, հիմա աչքերից էլ զրկուի : Ո՛վ անչափ տարաբաղդութեանս, ի՞նչ մեծ յոյս ունէի, ի՞նչպէս ի զուր դուրս եկա :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ.

Մուսան, Յարութիւնի որդի՛ն, քո ընկերը, հիմա կուրացած բանտումը, ո՞րքան զարմանք, ո՞վ ցաւալի տեսարան :

ՍՄԲԱՏՈՎ.

Ա՛խ, սա այն Մուսայն է, որ պատմում էիր զու Աղասի, քո հօգեկից ընկերը, որ իր կեանքը քեզ համար յետ էր զըրել, ափսոս քաջին, դրա քաջագործութիւնքը բոլոր պատմել ես ինձ թիֆլիզումը :

ԱՂԱՍԻ.

Այ՛ն իշխան, իմ Մուսան, իմ պատուական Մուսան, Աղասու միակ մտիթարութիւնը, իսկ հիմա միակ վիշտը : Ա՛խ, պատմի՛ր ինձ Մուսա՛, պատմի՛ր, թէ ո՞վ զրկեց քեզ աչքերից :

ՄՈՒՍԱ.

Աղասի, եթէ աչքեր չունիմ որ ելեսիդ նայելով իմանայի հոգւոյդ վըղովմունքը, մտաց աչքով ես պարզ տեսնում եմ, թէ ի՞նչ շփոթմանց մէջ ես դու, բայց ասեմ քեզ ճշմարիտը

վաթօն ու կարօն փամբակումը քո արևիդ մատաղ եղանո՞ւ
վանին մեր տասը Բրթասանցի Հայերի հետ գերի ընկաւ, նր-
րանցից հինգը իրենց կողից արիւնը բղնելու քո անուղէ էին
օրհնում: քո փափաքը քաշում: հինգն ևս յիսուն զինուորի ա-
ռաջից փախտական ընկան Ղարսայ հողը, որ գնան քո տա-
րաբաղդութիւնը պատմեն քո սիրելի Անի քաղաքին, որ ու-
զում էիր վերականգնես. իսկ քո Մուսան, քո վատարազդ Մու-
սան քսան Պարսից զինուորի հետ կռուելով՝ ի վերջոյ վառօթը
վերջացած՝ Հասան-Խանի ճանդն ընկաւ և ճանաչուելով նրանից,
իսկոյն աչքերից զրկուեցաւ և իբրև ի նախատինս բոլոր Հա-
յոց, Երևան ուղարկուեցաւ, բայց Աստուծոյ ողորմութիւնը չը
թողեց Հասան-Խանի սրտովը լինի :

ԱՂԱՍԻ չարացած.

Ա՛խ Հասան-Խան, Հասան-Խան, դու իմ ձեռքիցս ազատ-
ուեցար, թողէ՛ք, թողէ՛ք ինձ գնալ Զանգուն ընկնիլ: Եթէ ես
գիտենայի, թէ Երևանն առնուլ փոխանակ ուրախութեան ինձ
անփարատ վիշտ պէտք է լինի, ինչի՞ գլուխս մահու տալով
պատճառ կը դառնայի: Ես եմ մեղաւոր, Մուսա, ես եմ քեզ
պարտական, Աղասին այսուհետև քո գերին է. ինչի՞ համար
ես քեզ չըլսեցի, Հասան-Խանին արձակեցի. դու ինձ ասացիր,
դա թիւնաւոր օձ է, քանի շուտ ջախջախես գլուխը՝ օգուտ
է. ես քեզ պարտական եմ. ո՛հ, ո՛չ միայն քեզ, այլ և մեր բո-
լոր սիրելեան ընկերացը, որոնց յիշատակը անմահ պէտք է
մնայ ամէն Հայի սրտում: Ա՛խ իմ սիրելի ընկերք, դուք լու-
սեղէն պսակն առած՝ երկնքումը հրեշտակաց հետ հանգիստ
էք, էլ չէք նայում, թէ ձեր տարաբաղդ Աղասին քանի մնայ
աշխարհիս երե՛ ին, այնքան պէտք է յուսահատուի ու տանջ-
ուի, ո՛հ, երբ կըլինի, ես էլ մէկ մազ դառնայի ձեր ոտքիցը
կպած՝ ձեզ մօտ դայի :

ՄՈՒՍԱ.

Հիրիք չէ՞, Աղասի, քեզ էլ ես տանջում, այս խեղճ ծե-
րունւոյն էլ, որոյ բերանու մն էլ շունչ չէ մնացել, և քո ապեր-
ջանիկ Մուսային էլ. դու այսուհետև դեռ շատ ուրախ օրեր
ունիս անցկացնելու, իսկ քո Մուսայի ցանկութիւնը լրացաւ,

իմ փափաքն էր քեզ տեսնելը և հողիս տալը, թէպէտ աչքեր չունիմ, բայց ահա զիրկս առած՝ փափաքս ստացայ և այսուհետեւ ուրախ կը մեռանիմ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ.

Մուսա՛ իմ որդի, այդ է քո հօր մխիթարանքը :

ԱՂԱՍԻ.

Կո՛ծ ու սուրբ, հոգս ու վիշտ, եկէ՛ք, Աղասուն պատեցէ՛ք, սկ մահ, քո սառը թեւերով արի՛ առ իմ հողիս իմ սիրելի հօր և իմ ցանկալի եղբօր գրկին : Թող Մուսաս առանց աչքերի խորխափելով գայ գերեզմանիս վերայ թափէ իր մի քանի կաթ արտասունքը և զնայ Փամբակ, բաժանէ այն իմ Նաղլուի և երեխայից հետ : Գնա՛, Մուսա, թէև աչք չունիս, բայց քաղցր լեզու ունիս, գնա՛, մխիթարէ՛ Նաղլուին, իմ սիրուն երեխայիցը և քո տարաբաղդ թագուհուն :

ՄՈՒՍԱ.

Քէ՛, Աղասի, այսուհետեւ ինձ կեանքը հարկաւոր չէ, տա՛ս թագուհուն, թող իր սև օրերը ողբայ, ասա՛ Մուսան անունդ յիշելով՝ քեզ բարեբաղդու թիւն էր խնդում :

ՄԷԼԻՔ ՍԱՀԱԿ աչքերը սրբելով.

Աղասի, հերիք է՛ վերջ դրէ՛ք այս աղետալի տեսարանին, հաննէք այս խեղճ բանտարկելոցը լոյս աշխարհ, քաղցր ազատութիւնը սպասում է սրանց ընդունել իր գիրկը, սրբազան Ներսէս եպիսկոպոսից հրաման ունիմ :

ԱՂԱՍԻ.

Այո՛ Մէլեք, այո՛, սրանք թող ազատութիւն գտնեն, իսկ ասա՛ ինձ՝ Հասան-Խանն ո՛ւր է, ես պէտք է նրանից վրէժ առնեմ՝ վրէժ, վրէժ հայրենեաց, վրէժ իմ խեղճ ծնողայ և վրէժ իմ աչքիս լոյսի, իմ խաւարեալ Մուսայի : Մուսա՛, քո եղբայրը չի թողուլ Հասան-Խանին. Աղասին մինչև նորա արիւնը չթափէ, մինչև նորա լերդ ու թօքը դուրս չըքաշէ, մինչև բոլոր Հայոց անմեղ արեանը պարտափանին հազար մասն չանէ, չի հանդատանալ, թէև քո աչքերն այդպէս լինելուց յետոյ ինձ ի՛նչ հանդատութիւն : Այս միայն պէտք է լինի իմ սիրու-

փանքը և ուրախութիւնը, որ երևանը քրիստոնէի ձեռք ձգեցի : Եկէ՛ք, իմ սիրելի հայր, իմ ազնիւ եղբայր, եկէ՛ք միւս անգամ գրկեմ ձեզ և իմ փափաքս առնում :

Գրկում է.

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ .

Վերջին բառի հետ ներս են յարձակուում Աճառը, Վալին և Նսդին. երկուսը դաշնակը խփում են կրծքումը, իսկ մինը միջքումը և իմիասին ասում.

Ահա՛ քեզ Հասան-Խանից վրէժ առնուլ հիմա գնա՛ և ուրախացի՛ր :

Ամէնքը մնում են քարացած կանգնած, Մէլիք Սահակը և Սմբատովը մօտ են վազում բռնում Աղասուն, Մուսային և Տանուտէր Օհանէսին, Թուրքերը փախչում են :

Ա Ղ Ա Ս Ի Վ Ե Ր Չ Ի Ն Շ Ն Յ Ո Ւ Մ Ը .

Հայր . . . Մուսա . . . ահա՛ ես ձեր գրկումը մեռնում եմ . . . եթէ Հասան-Խանին չապանեցի . . . դոնէ . . . Հայոց ազգին ազատեցի . . . այս է ինձ համար . . . ամէնից երջանիկ օրը . . . իմ ցանկութիւնս կատարուեցաւ . . . հայր . . . մայր . . . աննման Նազըն . . . իմ սիրուն երեխէ՛ք . . . իմ ազնիւ ընկերներ . . . ահա դալիս եմ ձեզ մօտ . . . ո՛վ Հայեր . . . մնա՛ք բարեաւ . . . յաւիտեան :

Վարագոյրը իջնում է :



ԼԵՐՁ

708

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text below the top section.

STURZENEGGER

Faint, illegible text in the middle section of the page.

Faint, illegible text in the lower middle section of the page.

Faint, illegible text centered below the middle section.

Faint, illegible text in the bottom section of the page.

Faint, illegible text at the bottom left of the page.



Handwritten marks or numbers at the very bottom of the page.





издано в типографии

изъ Архангельскаго журнала Журналъ.

